

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՔՆՆԻՅ Յանձնաժողովի Գործունեության Մեկնարկը Եւ Ընդդիմութիւնը

44-օրեայ պատերազմը ու անոր արդիւնքներն ու հետեւանքները կը շարունակեն ծանր ազդել Հայութեան հաւաքական մտածողութեան վրայ: Մարդկային, տարածքային եւ նիւթական կորուստներու հոգեբանական ազդեցութիւնը երկար տարիներ պիտի մնան մեզի հետ եւ հաւանաբար փոխանցուի մի քանի սերունդներու: Այս ընթացքին Հայաստան պետութեան ուսերուն կ'իյնայ բացայայտել այն բոլոր հանգամանքները, որոնք պատճառ դարձան Հայկական կողմի պարտութեան:

Ուշացումով, սակայն Ազգային ժողովէն ներս սկսաւ գործել ռազմական գործողութիւններու ծալքերը ուսումնասիրելու նպատակով ստեղծուած ՔՆՆԻՅ Յանձնաժողովը, որու պարտականութիւնն է մեկտեղել պատերազմին նախորդող շրջանին ու անմիջական ընթացքին հետ առնչուող կառավարական ու զինուորական պատասխանատուներուն մօտ եղած տեղեկութիւնները ու ապա պատրաստել առարկայական փաստերու վրայ հիմնուած զեկոյց մը՝ իմանալու համար թէ տարիներու ընթացքին ինչպիսի սխալներ գործուած են, որոնցմէ կարելի է խուսափիլ ապագային:

Անցնող մէկ տարուայ ընթացքին ի յայտ եկան բազմաթիւ տուեալներ, գոյութիւն ունեցած թերացումներու մասին, որոնք ազդած են բանակի մարտունակութեան վրայ, սկսեալ սպառազինութեան անբաւարարութենէն մինչեւ հրամանատարական կազմի ոչ պատշաճ վիճակի վրայ գտնուիլը: Աւելին, վերջերս բացայայտուեցաւ լրտեսական բաւական լայն ցանցի մը գոյութիւնը, որուն անդամները գտնուած են պատերազմի դաշտին վրայ, ուրկէ տեղեկութիւններ փոխանցած են թշնամիին՝ նիւթական վարձատրութեան դիմաց: Անոնց ունեցած հակապետական գործունեութեան հետեւանքով պատերազմի թէ՛ պահերուն հակառակորդը յստակ տեղեկացած է հայկական զօրքերու թուաքանակի, անոնց տեղաշարժի ու մարտավարութեան մասին:

Այս բոլորը խոր ուսումնասիրութեան կարիքը ունին եւ ինքզինք յարգող ու երկրի ապագայով մտահոգ որեւէ իշխանութիւն չի կրնար զանց առնել մնացած հարցերու ուսումնասիրութիւնը ու պատշաճ եզրայանգումներու կատարումը:

## Մեր Քայլերը Ուղղուած Են Արցախահայութեան Իրաւունքներու Պաշտպանութեան, Անոնց Սիջազգայնօրէն Արձանագրման. Փաշինեան

Մեր քայլերը այսօր ուղղուած են ոչ միայն արցախահայութեան ընկերա-տնտեսական խնդիրներու լուծման, անվտանգային մարտահրաւէրներու յղթահարման, այլեւ Արցախի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան, այդ իրաւունքներու միջազգայնօրէն արձանագրման: Այս մասին Ղարաբաղեան շարժման տարեդարձին առիթով յղած ուղերձին մէջ կը նշէ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Ան կը նկատէ, որ հերոսներու սերունդներու եւ ընդհանուր հայրենիքին համար խաղաղ զարգացման դարաշրջան բանալը պիտի ըլլայ «մեծագոյն տուրքը նրանց յիշատակին, որով կ'երաշխաւորուի մեր պետութեան յարատեւութիւնը, Արցախի իրաւունքների միջազգային ճանաչումն ու իրացումը»:

«Այս նպատակների իրացումը պահանջում է հետեւողական, շրջահայեաց եւ ազնիւ աշխատանք ու այս աշխատանքին մէջ պիտի լինենք անսասան», ըստած է Հայաստանի ղեկավարի ուղերձին մէջ:



Արցախի ղեկավարութիւնը յարգանքի տուրք կը մատուցէ հայրենիքի պաշտպանութեան համար զոհուած հերոսներու շիրիմներուն

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանն ալ բարձրաստիճան պետական այրերու, զինուորականներու եւ «Ի Պաշտպանութիւն Արցախի» հասարակական նախաձեռնութեան՝ ՀՀ-էն ժամանած անդամներուն ուղեկցութեամբ այցելած է քաղաքային յուշահամալիրը եւ յարգանքի տուրք մատուցած է:

Ան եղած է նաեւ Ստեփանակերտի զինուորական պանթէոնին մէջ, ուր ծաղիկներ խոնարհած է հայրենիքի պաշտպանութեան համար զոհուած հերոսներու շիրիմներուն:

## Հայ-Ամերիկեան Թանգարանի Հիմնաքարի Զետեղման Համագաղութային Սիջոցառում



Հայ Ամերիկեան Թանգարանի եւ Մշակութային Կեդրոնի իմնաքարի զետեղման արարողութեան ընթացքին

Հարաւային Գալիֆորնիոյ եւ յատկապէս Կլենտէյլի բնակչութեան համար, պատմական օր մը հանդիսացաւ Հայ Ամերիկեան Թանգարանի եւ Մշակութային Կեդրոնի իմնաքարի զետեղումը: Արդարեւ անցեալ Հինգշաբթի 17 Փետրուարի, 2022 առաւօտեան ժամը 11:30ին, տեղի ունեցաւ այս կոթողային կառուցիչ հիմնաքարի զետեղման պաշտօնական արարողութիւնը:

Արդարեւ, շինութեան վայրի մօտ տեղի ունեցաւ յատուկ միջոցառում մը, մասնակցութեամբ Հայ

զաղութի տարբեր կազմակերպութեանց ղեկավարութեան: Այս միջոցառումին հանդիսավար Հայ Ամերիկեան Թանգարանի հոգաբարձուներու Խորհուրդի գործադիր տնօրէն Շանթ Սահակեանի բարի գալուստի ջերմ խօսքերէն ետք յաջորդաբար ելոյթներով հանդէս եկան Հոգաբարձութեան համանախագահներ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Թորգոմ Եպս. Տօնոյեան, Գերպ.

## Արցախ Կ'ողջունէ Տոնեցքի Եւ Լուկանսքի Անկախութիւնը ճանչնալու՝ Փութինի Որոշումը

Ազգերու ինքնորոշման եւ սեփական պետութիւն կառուցելու իրաւունքը անքակտելի է իւրաքանչիւր ժողովուրդի համար եւ կը հանդիսանայ միջազգային իրաւունքի հիմնարար սկզբունք, յայտնած է Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան՝ Արցախի իշխանութիւններուն ու ժողովուրդին անունով ողջունելով Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի որոշումը՝ ճանչնալ Տոնեցքի եւ Լուկանսքի ժողովրդական Հանրապետութիւններուն անկախութիւնը:

«Անկախ պետականութեան կերտումը եւ նրա միջազգային ճանաչումը հրամայական է դառնում յատկապէս գոյաբանական վտանգների ներքոյ, քանի որ այն բաւականին ազդեցիկ ու քաղաքակիրթ միջոց է արխանահեղութեան եւ մարդասիրական աղէտի կանխարգելման համար», իր ուղերձին մէջ ըսած է Յարութիւնեան՝ շարունակելով. «Արցախի Հանրապետութիւնը տասնամեակներ շարունակ պայքարում է իր ազատութեան, անվտանգութեան ու պետա-



# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Արցախը Տեր է Իր Իրաւունքներին Դա Վերահաստատում է Նաեւ 34 Տարի Անց

### ԼՈՒՍԻՆԵ ՄԵՒԹԱՐԵԱՍ

Արցախցին հերթական անգամ վերահաստատեց, որ անկախութիւնն ու արժանապատուութիւնն իր համար լուրջ բառեր չեն. ինչպէս 34 տարի առաջ, այնպէս էլ՝ հիմա Արցախը հաւատարիմ է իր ինքնիշխանութիւնն ու ազատութիւնն ամէն զնով պահպանելու եւ պաշտպանելու նպատակին:

1988 թ. Փետրուարի 20-ին արցախցիները ոտքի կանգնեցին՝ պաշտպանելու իրենց ազատ պարելու իրաւունքը: Այդ օրը Ստեփանակերտում ԼՂԻՄ Ժողովրդական պատգամաւորների խորհրդի արտահերթ նիստում որոշում ընդունուեց «ղիմել Ատրպէյճանական եւ Հայկական ԽՍՀ-ների Գերագոյն խորհուրդներին՝ նրանց միջնորդութեամբ ԼՂԻՄ-ը Ատրպէյճանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու եւ Հայկական ԽՍՀ-ի կազմ վերադարձնելու պահանջով»: Նոյն օրը Երեւանը նոյնպէս «ալեկոծուած» էր, հայութիւնը ոտքի էր կանգնել աջակցութիւն արցախահայրութեան: Փետրուարի 20-ին տրուեց ծանր եւ արիւնալի պայքարի մեկնարկը, որն առաջին փուլում աւարտուեց յաղթանակով: Հայ զինուորի բազուկը կերտեց փառահեղ յաղթանակ, քանի որ համայն հայութիւնն էր միասնական, դարձել էր մէկ բռունցք, մէկ սիրտ:

Ժամանակակիցները պատմում են, որ հեշտ չի եղել մարդկանց համար՝ դուրս գալ հրապարակ եւ բարձրաձայնել արդարացի պատակ Բեգլարեանը տեղեկագրեան իր ալիքում, անդրադառնալով ընդունուած օրէնքին, գրել էր, որ թէեւ ունեն «սահմանափակ իրաւական մեխանիզմներ» օրէնքում նշուած գործառնութիւնն իրականացնելու եւ նպատակներին հասնելու համար, սակայն պարտաւոր են առաւելագոյն օգտագործել առկայ իրաւական եւ քաղաքական մեխանիզմներն այդ ուղղութեամբ: Արցախի Հանրապետութեան տարածքները պէտք է դէօկուպացուեն, եւ մեր քաղաքացիները պէտք է վերադառնան իրենց տները»:

Այսպիսով՝ օրէնքի ընդունումը փաստում է, որ Արցախը չի համակերպուել ներկայ իրողութիւնների հետ եւ ցանկացած հնարաւորութիւն օգտագործելու է այդ մասին բարձրաձայնելու համար: Այն փաստում է ոչ միայն տարածքների կորստի, այլև արցախցիների իրաւունքների խախտման մասին: Ստեղծուած իրողութիւնների հետ չհամակերպուելու պատճառների հիմքում պատմական իրողութիւններն են:

1375 թ. Կիլիկիայի հայոց թագաւորութեան անկումից յետոյ Հայկական լեռնաշխարհի տարբեր անկիւններում, մասնաւորապէս լեռնային շրջաններում, իրենց կիսանկախ գոյութիւնն էին պահպանել մի շարք մանր իշխանութիւններ: Դրանցից առաւել հզօրն Արցախի մելիքութիւններն էին, որոնց վիճակուած էր մեծ դեր խաղալ թէ՛ ուշ միջնադարի հայոց պատմութեան մէջ, թէ՛ նոր եւ նորագոյն ժամանակներում: Այդ մելիքու-

թերեւս կասկած չկայ, որ այդ շրջափուլում Շուշիի հռչակագրի վաւերացումը թուրքական խաղն է, որն Անքարան փորձում է «կապիտալիզացնել» ուկրանիական մեծ խաղում իր դերակատարման համատեքստում: Դերակատարում, որ Անքարան փորձում է առաջ մղել, սակայն չի արժանանում համարժէք վերաբերմունքի թէ՛ Մոսկիտայում, թէ՛ Ուաշինգթոնում: Սա իհարկէ չի բացառում, որ ՌԴ-ն էլ, ԱՄՆ-էլ թուրքական գործոնը դիտարկում են իրենց մարտավարութեան որեւէ փուլի, որեւէ սցենարի պարագայում: Սակայն, Անքարան էլ իր հերթին փորձում է լինել ոչ թէ՛ ուաշինգթոնեան կամ մոսկովեան որեւէ սցենարով ներգրաւուող կամ պահանջուած, այլ առաջ մղել իր սցենարը, ձեւաւորելով դրա պահանջարկ Ուաշինգթոնում ու Մոսկուայում, կամ երկու տեղում էլ միանգամից:

Շուշիի հռչակագիրը չի շեղեց թերեւս ունի այդ նկատառումը կամ դիտարկումը, որը չի շեղում է ընդամենը կովկասեան ուղղութեամբ թուրքիայի դերակատարութեան աճը, որ Անքարան արձանագրեց Ռուսաստանի թողուութեան պայմաններում Արցախին ու Հայաստանին պարտադրուած պատերազմի միջոցով: Եթէ դիտարկում ենք այդ հռչակագիր ասուածը Արցախին ու Հայաստանին սպառնացող վտանգների համատեքստում, ապա այստեղ, որքան էլ հռչակագիրը «խօսուն» է, այդուհանդերձ ուղղափառ քաղաքական վտանգի առումով այն ըստ էութեան չի փոխում արդէն իսկ եղած թուրք-ատրպէյճանական փաստիշխանի բազան: Հետեւաբար, կայ այդ հռչակագիրը, թէ՛ չկայ, դրանից թուրք-ատրպէյճանական

## Հայաստանին Պէտք է Իր Խաղը

### ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՍ

Հայաստան խորհրդարանական խմբակցութիւնը նախաձեռնել է թուրք-ատրպէյճանական «Շուշիի հռչակագրի» վերաբերեալ յայտարարութիւն, որը սակայն մերժել է ՔՊ մեծամասնութիւնը:

«Շուշիի հռչակագիր» կոչուածը Պաքուն ու Անքարան ստորագրեցին դեռեւս 2021 թուականի Յունիսին, էրտողանի եւ Ալիեւի Շուշի այցի ընթացքում, իսկ վաւերացումը տեղի ունեցաւ օրերս: Ինչո՞ւ որոշուեց այդ հռչակագիր ասուածը վաւերացնել մի քանի ամիս անց հենց այն ժամանակահատուածում, երբ չափազանց բարդացել է իրավիճակը Ուկրանիայի շուրջ, որտեղ անկասկած վճռուած են ոչ միայն Ուկրանիային, եւ թերեւս ոչ այնքան Ուկրանիային, որքան աշխարհաքաղաքական դասաւորումներին եւ միջազգային անվտանգութեան ճարտարապետութեանը վերաբերող հիմնարար հարցեր:

## Հայաստանին որքանով է անհրաժեշտ եւս մէկ յայտարարութիւնն այն դէպքում, երբ այդ հռչակագիր ասուածի վաւերացումով Թուրքիան փորձում է խաղալ ուկրանիական ուղղութեամբ

Թերեւս կասկած չկայ, որ այդ շրջափուլում Շուշիի հռչակագրի վաւերացումը թուրքական խաղն է, որն Անքարան փորձում է «կապիտալիզացնել» ուկրանիական մեծ խաղում իր դերակատարման համատեքստում: Դերակատարում, որ Անքարան փորձում է առաջ մղել, սակայն չի արժանանում համարժէք վերաբերմունքի թէ՛ Մոսկիտայում, թէ՛ Ուաշինգթոնում: Սա իհարկէ չի բացառում, որ ՌԴ-ն էլ, ԱՄՆ-էլ թուրքական գործոնը դիտարկում են իրենց մարտավարութեան որեւէ փուլի, որեւէ սցենարի պարագայում: Սակայն, Անքարան էլ իր հերթին փորձում է լինել ոչ թէ՛ ուաշինգթոնեան կամ մոսկովեան որեւէ սցենարով ներգրաւուող կամ պահանջուած, այլ առաջ մղել իր սցենարը, ձեւաւորելով դրա պահանջարկ Ուաշինգթոնում ու Մոսկուայում, կամ երկու տեղում էլ միանգամից:

Շուշիի հռչակագիրը չի շեղեց թերեւս ունի այդ նկատառումը կամ դիտարկումը, որը չի շեղում է ընդամենը կովկասեան ուղղութեամբ թուրքիայի դերակատարութեան աճը, որ Անքարան արձանագրեց Ռուսաստանի թողուութեան պայմաններում Արցախին ու Հայաստանին պարտադրուած պատերազմի միջոցով: Եթէ դիտարկում ենք այդ հռչակագիր ասուածը Արցախին ու Հայաստանին սպառնացող վտանգների համատեքստում, ապա այստեղ, որքան էլ հռչակագիրը «խօսուն» է, այդուհանդերձ ուղղափառ քաղաքական վտանգի առումով այն ըստ էութեան չի փոխում արդէն իսկ եղած թուրք-ատրպէյճանական փաստիշխանի բազան: Հետեւաբար, կայ այդ հռչակագիրը, թէ՛ չկայ, դրանից թուրք-ատրպէյճանական

մարտահրաւէրը կամ սպառնալիքը Հայաստանի ու Արցախի հանդէպ չունի թէ՛ աճ, թէ՛ նուազում: Սա անշուշտ բոլորովին չի նշանակում, թէ՛ Հայաստանը չունի դրա հանդէպ իր վերաբերմունքը արտայայտելու կարիք:

Աւելին, Հայաստանն արտայայտել է՝ ԱԳՆ յայտարարութեամբ: Ամբողջ հարցը տուեալ պարագայում այն է, թէ՛ Հայաստանին որքանո՞վ է անհրաժեշտ եւս մէկ յայտարարութիւնն այն դէպքում, երբ այդ հռչակագիր ասուածի վաւերացումով Թուրքիան փորձում է խաղալ ուկրանիական ուղղութեամբ, իսկ Հայաստանի խորհրդարանի յայտարարութիւնը կարող է Անքարայի համար դառնալ ընդամենը կովկասում իր դէմ «հակախաղի» վերաբերեալ կասկած, այդպիսով տալով Հայաստանի եւ Արցախի որեւէ կերպ թիրախաւորման «առիթ»: Եւ սա մի պարագայում, երբ Հայաստանն իր յայտարարութեամբ չի լուծում որեւէ խնդիր, առնուազն Հայաստանի շահին ու անվտանգութեանն առնչուող, փոխարէնը կարող է կամայ, թէ՛ ակամայ դառնալ այլոց խնդիրների լուծման «գործիք»:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

## 1375 թ. Կիլիկիայի հայոց թագաւորութեան անկումից յետոյ Հայկական լեռնաշխարհի տարբեր անկիւններում, մասնաւորապէս լեռնային շրջաններում, իրենց կիսանկախ գոյութիւնն էին պահպանել մի շարք մանր իշխանութիւններ: Դրանցից առաւել հզօրն Արցախի մելիքութիւններն էին, որոնց վիճակուած էր մեծ դեր խաղալ թէ՛ ուշ միջնադարի հայոց պատմութեան մէջ, թէ՛ նոր եւ նորագոյն ժամանակներում: Այդ մելիքու-

հանջը, որի իրականացումը սերունդներ էին երազել: Ի վերջոյ, պիտի պոռթկար ցատկում՝ պատմական սխալն ուղղելու համար: Յետագայ վրիպումները, բացթողումներն ու սխալները հանգեցրին մի իրավիճակի, որից օգտուեց թշնամին: Այնուամենայնիւ, այս սօրուայ ծանր պայմաններում, երբ թշնամին բռնազաւթել է Արցախի Հանրապետութեան 75 տոկոսից աւելին, եւ վտանգուած են անկախութիւնն ու արցախցիների անվտանգութիւնը, արցախցիներն մէկ անգամ եւս վերահաստատեց, որ հաւատարիմ է աւելի քան երբեք տասնամեակ առաջ ամրագրած նպատակին:

Արցախի Ազգային Ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջութեամբ ընդունեց «Արցախի Հանրապետութեան բռնազաւթուած տարածքների մասին» օրէնքի նախագիծը՝ դրանով իսկ իրաւական ձեւակերպում տալով կատարուածին եւ միաժամանակ տէր կանգնելով իր ինքնիշխանութեանն ու տարածքային ամբողջականութեանը: Արցախի պետնախարար Ար-

թիւնների շնորհիւ էր, որ ինչ-որ չափով պահպանուեցին եւ յետագայ սերունդներին փոխանցուեցին պետականութեան մասին գիտելիքները, չի շղջութիւնը, եւ արդիւնքում վերստին վերականգնուեց հայոց պետականութիւնը:

Կատարուածից պէտք է նաեւ դասեր քաղել, խօսքը վերաբերում է թէ՛ երեք հարիւր, թէ՛ երեսուն տարուայ վաղեմութիւն ունեցող պատմական իրադարձութիւններին եւ ճակատագրական դարձած սխալներին ու թերացումներին: Մենք կարողանում ենք համախմբման միջոցով լուծել մեր առջեւ կանգնած գոյութեան կամ մարտահրաւէրները, սակայն դրանց ամրապնդման եւ յետագայ փոխելիքի անցնելու միաւորող գաղափարներ ու նպատակներ չեն դրուում: Հայոց գէնքը մեր պատմութեան գրքում փառահեղ էջեր է գրում, սակայն մենք դեռեւս մնում ենք ժողովրդից ազգ դառնալու ճանապարհին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնեւորում հոն արտայայտուող բոլոր միտքերը

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

### MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ԼՈՒՐԵՐ

Ուել Սէյը Զի Կրնար Զրաժարիլ Պատերազմի Զանգամանքները Ուսուճնասիրող ՔՈՆԻՅ Յանձնաժողով Գալէ. Անդրանիկ Քոչարեան

2020 թուականի Սեպտեմբեր 27-ին սանձագերծուած ռազմական գործողութիւններու հանգամանքներու ուսուճնասիրման նպատակով ստեղծուած Քոնիչ Յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան կը վստահեցնէ՝ նիստերուն հրաւիրուող ուել Սէյը կրնար չներկայանալ: Քոչարեան այս մասին ըսաւ Քոնիչ Յանձնաժողովին կողմէ կազմակերպուած աշխատանքային քննարկման բաց հատուածին մէջ:

Ներկայ էր նաեւ Պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար, գորավար Սամուէլ Պապայեանը՝ որպէս անկախ խորհրդատու: Փակ նիստերը կը տեսանկարահանուէին, որոնք արխիւի պիտի վերածուէին, Քոչարեանը վստահեցուց, որ որեւէ դրուագ պիտի չկորսուի: Ըստ անոր՝ Յանձնաժողովի աշխատանքներուն անձեր կը հրաւիրեն ըստ անհրաժեշտութեան:

Քոչարեանի խօսքով՝ եթէ կայ անհրաժեշտութիւն, որ ուել մէկը գայ յանձնաժողով, ապա պէտք է գայ: «Ուել մէկը չի կարող հրաժարուել այստեղ գալուց: Շատերը փորձում են քաղաքականացնել այս թեման, ասել, թէ չեն ուզում գալ, յանձնաժողովը օրինական չէ: Ոչ, օրինական է ի սկզբանէ, քանի որ սա սահմանադրական պահանջ է: Աւելին՝ շատ աւելի օրինական է, որովհետեւ առաջին անգամ մեր յանձնաժողովի աշխատանքներին



44-օրեայ պատերազմի հանգամանքներու ՔՈՆԻՅ Յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

մասնակցելու են գոհուածները հարգատանքի պատուիրակած անդամներ», ըսաւ Քոչարեան:

Անդրադառնալով ՀՀ Զինուած Ուժերու գլխաւոր շտաբի նախկին պետ, Պաշտպանութեան Նախարարութեան ռազմական վերահսկողական ծառայութեան նախկին պետ, գորավար-գնդապետ Մովսէս Յակոբեանի յայտարարութեան, թէ ինչ էր պատրաստուիր երթալու Յանձնաժողովի նիստերուն՝ Քոչարեան կարծիք յայտնեց, որ Յակոբեանը ժամանակ կ'ունենայ իր յայտարարութիւնը ետ վերցնելու:

Դատախազութիւնը Կ'ուսուճնասիրէ Նախկին Նախագահ Արմէն Սարգսեանին Վերաբերող Զրապարակումը

Գլխաւոր Դատախազութիւնը սկսած է ուսուճնասիրել, թէ արդեօք Հետաքննող լրագրողներու հրապարակած նոր տեղեկատուութիւնը արդէն նախկին նախագահ Արմէն Սարգսեանի վերաբերեալ կը համապատասխանէ՞ իրականութեան:

Միջազգային գործընկերներուն հետ իրականացուցած հետաքննութեան ընթացքին «Հետք» պարզած է, որ Միացեալ Թագաւորութեան մէջ դեսպան աշխատելու տարիներուն Արմէն Սարգսեանի եւ անոր քրոջ՝ Կարինէ Սարգսեանի անուամբ գուլիցերիական Credit Suisse դրամատան մէջ եղած է 10 միլիոնէ աւելի գուլիցերիական ֆրանք, որ, սակայն, դեսպան Սարգսեանը չէ յայտարարագրած:

«Հրապարակումը լոյս տեսնելուց չետոյ անմիջապէս մեր տեսողաշտում յայտնուել է եւ աշխատանքային առաջին իսկ օրուայ սկզբում մոտաքաղուել է դատախազութիւնում եւ դրանով նախաձեռնուել է ուսուճնասիրութիւն՝ նկատի ունենալով, որ հրապարակումը պարունակում էր ճշգրտութիւն պարունակող տուեալներ այն մասին, որ նախկին նախագահը դրամատանային հաշիւներում ունեցել է գումարներ, որոնք չի յայտարարագրել: Ինչպէս գիտէք, չյայտարարագրելը կամ յայտարարագրմամբ սխալ տեղեկութիւններ, ստուեալներ ներառելը քրէական օրէնքով արգելուած գործողութիւն է», ըսած է Գլխաւոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամեանը:



Նախկին նախագահ Արմէն Սարգսեան

Ըստ հետաքննող լրագրողներու, Սարգսեաններուն հաշիւը գործած է 2006 թուականէն՝ դրամատան կողմէ սպասարկուելով մինչեւ 2016 թուական: Սարգսեան Մեծն Բրիտանիոյ մէջ Հայաստանի դեսպանը եղած է 2013-2018 թուականներուն: Անցեալ ամիս նախագահի պաշտօնէն անսպասելի հրաժարական տուած Սարգսեանը 10 միլիոն ֆրանքը չյայտարարագրելը բացատրած էր այսպէս. «Այն ժամանակ յայտարարագրերն ելեկտրոնային չէին եւ չէին պարտաւորեցնում յայտարարագրել ճշգրիտ դրամատանային հաշիւներ, միայն իմ կանխիկ գումարները, որոնք ես ամէն տարի յայտարարագրում էի», նշած էր ան՝ յաւելելով, որ այդ պատճառով ալ յայտարարագրած է միայն 8 միլիոն եւրօ:

Լրտեսական Ցանցին Անդամները Պատերազմի Ժամանակ Տեղեկութիւններ Փոխանցած Են Թշնամին. ԱՄՑ

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ծառայութեան քննչական բաժանմունքին մէջ կը շարունակուի պետական դատախազութեան եւ լրտեսութեան դէպքերու առթիւ յարուցուած քրէական գործին նախաքննութիւնը:

Հաշուի առնելով սոյն քրէական գործին նկատմամբ հանրային լայն շրջանակներու հետաքրքրութիւնը՝ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը կը տեղեկացնէ, որ գործով վարույթի շրջանակներուն մէջ ձեռնարկուած քրէադատավարական եւ հետախուզական միջոցառումներու շնորհիւ տուեալներ ձեռք բերուած են առ այն, որ գործակալական ցանցին մէջ ներգրաւուած Հայաստանի Հանրապետութեան քաղաքայինները, իրենց մասնակցութիւնը ունենալով քառասունչորսօրեայ պատերազմին, օտարերկրեայ հետախուզութեան առաջադրանքով մարտի դաշտէն անոնց փոխանցած են ռազմական բնագաւառի բազմապիսի տեղեկութիւններ:

Վերջիններուն ծաւալած հակապետական գործունէութեան հետեւանքով պատերազմի թէ՛ պահերուն հակառակորդին հնարաւորութիւն տրուած է յստակ տեղեկանալու հայկական զօրքերուն, զօրամիտաւորութիւններուն, զինուորական սարքի տեսակին, թուաքանակին, անոնց հնարաւոր մարտավարութեան՝ յարձակման, պաշտպանութեան, հանդիպակաց մարտին, մարտավարական վերադասաւորումներուն եւ այլնի վերաբերեալ, ընդհուպ՝ քարտէզի վրայ տեղորոշուած եղանակով ստանալով հայկական ուժերու աշխարհազրական յստակ տուեալները:

Պետութեան հիմքերը խարխուղ տարած քային ամբողջականութեան սպառնացող, պատերազմի դաշտին մէջ անձուիրաբար մարտնչող անձերու կեանքը վտանգող հակապետական գործունէութեան հետեւանքով հակառակորդը անօդաչու թռչող սարքերու եւ հրետանային տարրերը գինատեսակներու՝ շարքէն հանելով հայկական զօրամիտաւորութիւնը անոնց առջեւ դրուած է ինքնապայաք զինուորական ցանցին մէջ ընդգրկուած անձերու ամբողջական շրջանակը պարզելու, անոնց նկատմամբ քրէական հետապնդումներ յարուցելու, ինչպէս նաեւ օտարերկրեայ հետախուզութեան գործունէութիւնը գինուած ուժերուն մէջ չէզոքացնելու ուղղութեամբ:

Քոչարեան Կը Շարունակէ Զիսակնալ Իրեն Վերագրուող Մեղադրանքը

Երեւանի Ընդհանուր Իրաւասութեան Դատարանի Շէնգալի Նստավայրին մէջ, դատաւոր Աննա Դանիբեկեանի նախագահութեամբ, շարունակուած է 3 միլիոն տոլար կաշառքի մեղադրանքով Ռուպերթ Քոչարեանի եւ Արմէն Գէորգեանի գործով դատական նիստը:

Յիշեցնենք, որ նախորդ նիստին մեղադրող դատախազ Պետրոս Պետրոսեան ընթացած էր մեղադրական եզրակացութեան մէկ մասը: Քոչարեանի պաշտպանները դատարանին ու մեղադրող կողմին խնդրած էին նշել, թէ ճշգրիտ ինչի՞ համար կը մեղադրուին Քոչարեանն ու Գէորգեանը: Դատախազներն ու դատարանը համարած էին, որ մեղադրական եզրակացութեան մէջ ամէն բան պարզ է: Ի նշան բողոքի՝ Քոչարեանի պաշտպանները լքած էին նիստերու դահլիճը: Դատաւոր Աննա Դանիբեկեանը տուեալներ տեսքով պատժամիջոց կիրառած էր անոնց նկատմամբ:

Այսօրուայ նիստին Քոչարեանը կրկին յայտարարեց, թէ չի հասկնար ինչ բանի համար գինք կը մեղադրեն. «Փաստաբաններին միշտ ստում եմ՝ ինձ բացատարէք՝ ինչի՞ մէջ են ինձ մեղադրում, որովհետեւ նկարագրուած չէ որեւէ գործողութիւն, թէ ես ինչ եմ արել: Ինչ-որ մեղադրանքներ են, բայց ես ի՞նչ

չող անձերու կեանքը վտանգող հակապետական գործունէութեան հետեւանքով հակառակորդը անօդաչու թռչող սարքերու եւ հրետանային տարրերը գինատեսակներու օգտագործմամբ կատարած է տեղային յստակ խոցումներ՝ շարքէն հանելով հայկական զօրամիտաւորութիւնը եւ խոչընդոտելով անոնց առջեւ դրուած խնդիրներու հետագայ իրականացումը:

Ընդ որում, յատկանշական է այն, որ օտարերկրեայ հետախուզութիւնը լրտեսական ցանցին մէջ ներգրաւուած է հիմնականին մէջ նախկին կամ ներկայ զինուորականներ, որոնք ծառայութեան բերումով հնարաւորութիւն ունեցած են մուտք գործելու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն մէջ գտնուող զօրամասեր, բարձրանալու մարտական դիրքեր, ծանօթանալու ռազմական բնագաւառին վերաբերող բազմապիսի փաստաթուղթերու եւ տեղեկութիւններու:

Քրէական գործին նախաքննութեամբ ձեռք բերուած ապացոյցներու բաւարար համակցութեան պայմաններու մէջ պետական դատախազութիւնը կատարելու եւ անոր օժանդակելու համար մեղադրանք առաջադրուած է ընդհանուր թիւով 20 անձերու, որոնցմէ 14-ին նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է կալանաւորումը:

Նախաքննութիւնը կը շարունակուի, կը ձեռնարկուին համալիր հետախուզական միջոցառումներ եւ քննչական գործողութիւններ լրտեսական ցանցին մէջ ընդգրկուած անձերու ամբողջական շրջանակը պարզելու, անոնց նկատմամբ քրէական հետապնդումներ յարուցելու, ինչպէս նաեւ օտարերկրեայ հետախուզութեան գործունէութիւնը գինուած ուժերուն մէջ չէզոքացնելու ուղղութեամբ:

դերակատարութիւն եմ ունեցել, անհասկանալի է: Իմ փաստաբաններն ինձ ասում են՝ մենք էլ չենք հասկանում», յայտնեց Քոչարեան:

Նիստի ժամանակ Ռուպերթ Քոչարեանի պաշտպանները միջնորդութիւն ներկայացուցած են՝ գործի վարույթը կասեցնելու եւ Սահմանադրական Դատարանի դիմելու մասին:

Պաշտպան Հայկ Ալումեանի խօսքով՝ միջնորդութեան առարկան օրէնսդրական բացն է. Քրէական Դատարանը գործը քննող դատարանին հնարաւորութիւն չի տար պարզաբանելու ամբաստանեալին առաջադրուած մեղադրանքը այն պարագաներուն, երբ այդ մեղադրանքը շարադրուած է ոչ-պարզ ձեւով եւ միաժամանակ նման պարտաւորութիւն չի դնել մեղադրողին վրայ:

Մեղադրող դատախազ Գէորգ Պաղտասարեան առարկեց միջնորդութեան դէմ՝ նշելով, որ միջնորդութիւնը բացարձակ հիմնաւորուած չէ ու ենթակայ է մերժման: Պաղտասարեանը պարզաբանեց, թէ ինչի համար կը մեղադրուի Քոչարեանը. «Մեղադրուած է խոշոր չափով կաշառք ստանալու համար. մանրամասն նկարագրուել է, թէ ով ում հաշուին ինչի համար ինչքան գումար է փոխանցել»:



# ԼՈՒՐԵՐ

## Փութին Փաշինեանը Պաշտօնական Այցով Զրաւիրած Է Մոսկուա

Փետրուար 21-ին հեռախօսակցութեամբ տեղի ունեցած է Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութինի միջեւ:

Երկու երկիրներուն ղեկավարները քննարկած են 2020 թուականի Նոյեմբեր 9-ի, 2021 թուականի Յունուար 11-ի եւ Նոյեմբեր 16-ի եռակողմ յայտարարութիւններով ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու

կատարման ընթացքը:

Ռուսաստանի Դաշնութեան նախագահը Հայաստանի վարչապետը հրաւիրած է զարնան պաշտօնական այցով մեկնելու Մոսկուայ: Հայաստանի վարչապետն ալ, իր հերթին, Վլատիմիր Փութինը հրաւիրած է Հայաստան:

Զրուցակիցները քննարկած են նաեւ ռուս-ուքրանական յարաբերութիւններուն մէջ հաստատուած իրավիճակը, տարածաշրջանային անվտանգութեան հարցեր:

## Արցախի ԱԺ-ն Ընդունեց «Բռնագրաւուած Տարածքներու Մասին» Օրէնքը

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովին մէջ ընդունուեցաւ պատգամաւորներ Ա. Թովմասեանի, Դ. Մելքոնեանի, Ա. Մոսիյեանի, Դ. Գալստեանի, Գ. Բաղդուցի, Ա. Յարութիւնեանի կողմէ օրէնսդրական նախաձեռնութեան կարգով ներկայացուած «բռնագրաւուած տարածքներու մասին» օրէնքի նախագիծը:

Նախագիծը ընդունուեցաւ 31 կողմ, 0 դէմ, 0 ձեռնպահ ձայներով:

Սոյն օրէնքը կը սահմանէ 1991-1994 եւ 2016 թուականներուն Ատրպէյճանի Հանրապետութեան եւ 2020 թուականին Թուրքիոյ Հանրապետութեան եւ օտարերկրեացի զինեալ ահաբեկիչներու անմիջական մասնակցութեամբ Ատրպէյճանի Հանրապետութեան կողմէ Արցախի Հանրապետութեան դէմ իրականացուած ռազմական յարձակման հետեւանքով բռնագրաւուած տարածքներու իրաւական կարգավիճակին ու անոնց վրայ տարածուող իրաւական յատուկ կարգին, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմին-

ներու, կազմակերպութիւններու գործունէութեան առանձնաշատկութիւններու, մարդու եւ քաղաքացիի իրաւունքներու եւ ազատութիւններու, ինչպէս նաեւ իրաւաբանական անձերու իրաւունքներու եւ շահերու պահպանութեան ու պաշտպանութեան հետ կապուած յարաբերութիւնները:

Բռնագրաւուած տարածքները Արցախի Հանրապետութեան անբաժանելի մասն են, որոնց վրայ կը տարածուի Արցախի Հանրապետութեան օրէնսդրութեան գործողութիւնը:

Յարակից գեկուցմամբ, Արցախի Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Դաւիթ Պապայեան կարեւորեց օրէնքի ընդունումը՝ նկատելով, որ թերեւս քիչ մըն ալ ուշացած ենք. «Ի վերջոյ, մեր երկրի մեծ մասը բռնագրաւուած է եւ մենք պարտաւոր ենք ունենալ այս օրէնքը: Այն իր մէջ ներառում է ԱԺ ժողովրդի, իշխանութեան տեսլականը՝ իր անցեալի, ներկայի եւ ապագայի նկատմամբ»:

## Ատրպէյճանը Զետախուզում Յայտարարած Է Ռոպերթ Քոչարեանի Եւ Սերժ Սարգսեանի Նկատմամբ

Ատրպէյճանը հետախուզում յայտարարած է Հայաստանի 2-րդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ 3-րդ նախագահ Սերժ Սարգսեանի նկատմամբ, կը յայտնեն ատրպէյճանական լրատուամիջոցները՝ յղում կատարելով Ատրպէյճանի Զինուորական Դատախազութեան Յատուկ Քննչական Վարչութեան պետ, արդարադատութեան աւագ խորհրդական Էմիլ Թադիեւին:

Անոր խօսքով՝ 1988 թուականի փետրուարէն ՀՀ նախկին նախագահները, ատրպէյճանցի եւ հայ ժողովուրդներուն միջեւ ազգային թշնամանք, ատելութիւն հրահրելու նպատակով ժողովներ հրաւիրած են:

Աւելի շուտ, ատրպէյճանական լրատուամիջոցները, յղում կատարելով Ատրպէյճանի պաշտօնական աղբիւրներուն, տեղեկութիւններ հրապարակած էին ատրպէյճանական իշխանութիւններուն կողմէ Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի նկատմամբ քրէական հետապնդում յարուցելու եւ միջազգային հետախուզում յայտարարելու վերաբերեալ:

Հայաստանի Գլխաւոր Դատախազութիւնը յայտարարած էր,

որ «միջոցներ են ձեռնարկուել ինթերփոլի գլխաւոր քարտուղարութեան միջոցով ապօրինի հետախուզման փորձերը կանխելու, հետախուզում յայտարարելու մասին հարցումներ ստանալու դէպքում դրանց ընթացք չտալու, նշուած անձանց հետախուզման վերաբերեալ տուեալները ինթերփոլի համապատասխան պահոցներում չներառելու եւ դրանց կապակցութեամբ ինթերփոլի ուղիներով որեւէ համագործակցութիւն չիրականացնելու ուղղութեամբ»: Ինչպէս նշած էր գերատեսչութիւնը, հաշուի առնուած է առաջին հերթին այն հանգամանքը, որ ըստ ինթերփոլի կանոնադրութեան 3-րդ յօդուածին՝ կազմակերպութեան խստիւ կ'արգիլուի որեւէ գործունէութիւն ծաւալել կամ միջամտել քաղաքական, գինուորական, կրօնական, ցեղապաշտական բնոյթ կրող գործերուն եւ հարցերուն:

Արցախեան 44-օրեայ պատերազմէն յետոյ, Արայիկ Յարութիւնեանը, ինչպէս հաղորդուած է, քանի մը անգամ մեկնած է արտերկր՝ մասնաւորապէս Ռուսաստանի Դաշնութիւն:

## Փաշինեան Կը Յայտարարէ «Հայկական Խաչներու» Նախագիծին Մասին



Վարչապետ Նիկոլ Փաշինեան, կառավարութեան նիստի ընթացքին

Հայաստանի կառավարութիւնը վերաձեւակերպած է «Հիւսիս-Հարաւ» նախագիծը՝ դարձնելով «Հիւսիս-Հարաւ/Արեւելք-Արեւմուտք» կամ «Հայկական Խաչներու»», եւ յոյս ունի գայն մեծ կշռոյթներով իրականացնելու, կառավարութեան նիստին յայտատարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Այդ ճանապարհի ճիւղերից մէկը, նկատի ունեմ Հիւսիս-Հարաւ, Արեւելք-Արեւմուտք, կամ եթէ կարճ ասենք՝ Հայկական Խաչներու կի ճիւղերից մէկը, կը կապի հիւսիսը հարաւին, այսինքն, ըստ էութեան, Հայաստանի Հանրապետութիւնից դէպի Իրանի Իսլամական Հանրապետութիւն, միւս ճիւղը, ըստ էութեան, Ատրպէյճան, Հայաստան եւ հետագայում՝ դէպի Նախիջեւան, Թուրքիա», ներկայացուց վարչապետը:

Ուշագրաւ էր վարչապետին յաջորդ յայտարարութիւնը, թէ Երասխ-ձուլֆա-Մեղրի-Հորատի գերկաթուղիի վերագործարկման վերաբերեալ յառաջիկային կը սպասուի փաստաթուղթի ստորագրում:

«Ի հարկէ, Արեւելք-Արեւմուտքի նախագծային հատուածն արուած է, բայց լընթացք քաղաքական պայմանաւորուածութիւնների եւ համաձայնութիւնների ձեռքբերման ծիրին մէջ մենք շատ արագ կ'իրականացնենք նաեւ այդ հատուածը: Գիտէք նաեւ, որ մենք հիմա ճշգրիտ աշխատանքներ ենք իրականացնում Երասխ-ձուլֆա-Օրտուպատ-Մեղրի-Հորատի գերկաթուղու հայկական հատուածի կառուցման համար: Ըստ էութեան, չնայած թեք-

նիք եւ նախագծային աշխատանքներն արդէն մեկնարկել ենք, յառաջիկայում յոյս ունենք, որ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները կ'արձանագրուեն որեւէ փաստաթղթի տեսքով եւ արդէն նաեւ տէ իւրէ գործընթացն ամբողջ թափով կը ծաւալուի», նշեց Փաշինեան:

Վարչապետ Փաշինեան նաեւ յայտարարեց. «Հիւսիս-Հարաւ հատուածում մենք բնականոն գործող ճանապարհներ ունենք, Արեւելք-Արեւմուտք հատուածում բնականոն գործող ճանապարհներ չունենք: Ի հարկէ, յոյս ունենք նաեւ Արեւելք-Արեւմուտք հատուածով հնարաւորինս արագ հասնել լուծումներին եւ, ըստ անհրաժեշտութեան, ունենալ ժամանակաւոր գործող ճանապարհ եւ հետագայում՝ այս նախագիծի ամբողջացման բնագործի մէջ ունենալ նաեւ հիմնական, արդէն վերջնական, այս նախագիծի ծիրին մէջ գործող ճանապարհ»:

Նախագիծին արժէքը քանի մը հարիւր միլիոն տոյար է, տեղեկացուց կառավարութեան ղեկավարը՝ շեշտելով «Այս մասշտաբի ներդրումային ծրագիր, ըստ էութեան, Հայաստանի անկախութեան պատմութեան մէջ չի իրականացուել»:

Յիշեցնենք, որ 2021-ի Յուլիսին Եւրոմիութիւնը յայտարարեց Հայաստանին 2,6 միլիարդ եւրօ աջակցութեան փաթեթի մասին, նշուած գումարէն 600 միլիոնը նախատեսուած է Միսիան-Քաջարան հատուածի կառուցման համար:

## Լաչինը Շրջանցող Գանապարհը Շահագործման Պիտի Յանձնուի Յուլիսին. Ատրպէյճանցի Պաշտօնեան

Լաչինը շրջանցող ճանապարհը շահագործման պիտի յանձնուի 2022 թուականի Յուլիսին: Այս մասին յայտարարած է Ատրպէյճանի ճանապարհային Պետական Գործակալութեան ղեկավար Սալէհ Մամետովը:

«Այդ ճանապարհին երկարութիւնը 28 քիլոմետր է, որուն 17 քիլոմետրը արդէն կառուցուած է: Ճանապարհին շահագործումը կը ծրագրուի մինչեւ ընթացիկ տարուայ Յուլիսը», յայտարարած է Մամետովը:

Ատրպէյճանցի պաշտօնեան նշած է, որ ճանապարհը պիտի միացնէ Լաչինի շրջանի վեց գիւղեր: «Ներկայիս հայերը կ'անցնին Լաչինով: Լաչինը շրջանցող

այլընտրանքային ճանապարհէն պիտի օգտուին ե՞ւ հայերը, ե՞ւ մեր քաղաքացիները», նշած է Մամետովը:

Լաչինը շրջանցող ճանապարհին շինարարութիւնը Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն եռակողմ յայտարարութեան կէտերէն մէկն է. երեք տարուայ ընթացքին Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղիի կառուցման նախագիծ պէտք է հաստատուի, եւ այն պաշտպանելու համար այդտեղ նոյնպէս պէտք է ռուս խողարպահներ տեղակայուին: Նոր ճանապարհը Արցախի Հին Շէն, Մեծ Շէն գիւղերուն տարածքով պիտի անցնի:



# Ղարաբաղի Հարցը Տակաւին Ամբողջութեամբ Կարգաւորուած Չէ, Բայց Յառաջխաղացում Կայ. Փութինը՝ Ալիեւին



Փութին-Ալիեւ հանդիպումը Մսկուայի մէջ

Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպման ժամանակ յայտնած է, որ Ղարաբաղի հարցը տակաւին ամբողջութեամբ կարգաւորուած չէ, բայց յառաջխաղացում կայ:

Ալիեւի հետ հանդիպման ընթացքին Փութին նշած է, որ ձեռք բերուած են պայմանաւորուածութիւններ Լեռնային Ղարաբաղի մէջ առեւտրատնտեսական կապերու զարգացման վերաբերեալ:

Փութինի խօսքով՝ կան նաեւ վէճեր, սակայն Մոսկուան ամէն ինչ պիտի ընէ, որպէսզի կարգաւորման գործընթացը խաղաղ ճանապարհով ընթանայ:

«Ամէն պարագայի, արդէն որոշակի պայմանաւորուածութիւններ կան ոչ միայն այնտեղ (Լեռնային Ղարաբաղի մէջ - Խմբ.) բնակող բոլոր մարդոց անվտանգութեան ապահովման, այլեւ առեւտրատնտեսական կապերու զարգացման, ճանապարհային հաղորդակցութիւններու ապաշրջափակման տեսանկիւնէն: Գիտեմ, որ դեռ վէճեր կան, աշխատելու բան կայ, բայց մենք մեր կողմէ ամէն ինչ պիտի ընենք, որպէսզի այդ գործընթացը զարգանայ խաղաղ միջոցներով, խաղաղ ճանապարհով, եւ որպէսզի մենք հասնինք այդ գործընթացին մէջ ներգրաւուած բոլոր կողմերու բաւարարման», ըսած է Փութին:

## Քննիչ Յանձնաժողովի Գործունէութեան

Շարունակուած է 1-էն

Քննիչ Յանձնաժողովի աշխատանքներուն առայժմ կը մերժէ մասնակցիլ խորհրդարանական ընդդիմութիւնը, առարկելով թէ, եզրակացութիւնը կանխորոշուած է մեծամասնութեան կողմէ, որոնք պիտի փորձեն ամբողջ պատասխանատուութիւնը դնել նախորդ իշխանութիւններուն վրայ: Այս պատճառաբանութիւնը տեղին չէ, քանի որ վարչապետ Նիկոլ Փաշինեան քանիցս յայտարարած է, որ ինք եւս ունի պատասխանատուութեան իր բաժինը՝ պատերազմի ձախող ընթացքին հետ կապուած: Եթէ ընդդիմութիւնը կասկածներ ունի Յանձնաժողովի գործունէութեան վերաբերեալ, լաւագոյն առիթը պիտի ըլլայ որ, գայ ու մասնակցի լսումներուն, ուր առաջին ներկայացողներէն մէկը պիտի ըլլայ երկրի վարչապետը:

Յանձնաժողովի գործունէութիւնը այժմէն իսկ կասկած տակ դնելով ընդդիմութիւնը հաւանաբար հող կը պատրաստէ երկրի

նախկին ղեկավարներուն՝ լսումներուն չներկայանալուն համար: Կայ նաեւ մէկ այլ բացատրութիւն, որ իրենք շահաքրքրուած չեն Հայաստանի ապագայով եւ իրենց համար գլխաւոր նպատակը իշխանութեան վերատիրանալ է: Այդ ձգտումը իրենց իրաւունքն է, սակայն միայն ազատ ու արդար ընտրութիւններու միջոցաւ:

Փաշինեանի գլխաւորած 2018-ի շարժումը օրինակ չի կրնար ծառայել Քոչարեանականներուն համար, նկատի ունենալով որ ներկայիս ժողովրդային պահանջ չկայ՝ ցոյցերու միջոցաւ իշխանութիւն տապալելու:

Ընդդիմադրութիւնը չմասնակցելով Քննիչ Յանձնաժողովի աշխատանքներուն կը թերանայ իր պարտականութիւններուն մէջ, որուն համար ուղարկուած է խորհրդարան: Անոնց բոլոր նախկին ձախողումներուն ու մեղքերուն վրայ կու գայ աւելնալու նաեւ այս մէկը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

## Արցախ Կողմում

Շարունակուած է 1-էն

կանակերտման համար եւ ստիպուած է եղել բազմիցս անցնել ծանր փորձութիւնների ու ցեղասպան գործողութիւնների միջով: Ուստի, համոզուած ենք, որ Արցախի Հանրապետութիւնը, որն ունի համապատասխան պատմական, քաղաքական, իրաւական ու բարոյա-

կան անվիճարկելի հիմքեր, վատակել է իր ինքնիշխան պետութեան միջազգային ճանաչումը: Պատմական որակելով այս իրադարձութիւնը՝ Արցախի Յարութիւնեան շնորհաւորած է Տոնպասի ժողովուրդը եւ յոյս յայտնած, որ «երբեմնի ծաղկող այս երկրում կրկին կը վերահաստատուի ամուր խաղաղութիւն եւ կայունութիւն»:

# Եւրոնեսի Նիստին Քննարկուած Են Նաեւ Արցախին Վերաբերող Հարցերը



Եւրոնեսի խորհրդարանական Վեհաժողովի գրասենեակի միստը Երեւանի մէջ

Երեւանի մէջ, Փետրուար 21-22-ին տեղի ունեցած Եւրոնեսի խորհրդարանական Վեհաժողովի գրասենեակի նիստին քննարկուած են նաեւ Արցախի հիմնախնդիրներ վերաբերող հարցերը: Այս մասին ըսած է «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Մարիա Կարապետեանը:

«Այսօր առաւօտեան Քաղաքական Կոմիտէի օրակարգում քննարկուել է «Հարաւային Կովկասում Անվտանգութիւնը» թեմայով օրակարգային հարցը, որի շրջանակներում քննարկուել է Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը: Եւ այդ հակամարտութեան վերջնական խաղաղ լուծման վերաբերեալ եւս կատարուեցին շեշտադրումներ: Եւրոպական խորհրդարանի մեր գործընկերներն իրենց աջակցութիւնն են յայտնել այդ օրակարգին: Առաջին բանաձեւում կամ նախագիծ նախատեսուած էջը,

որը պէտք է դրուէր քուերակութեան», ըսաւ ան:

Հարցին, թէ ի՞նչ դիրքորոշում ցուցաբերած են նիստին մասնակցող Պաքուէն պատուիրակները, Մարիա Կարապետեան պատասխանեց. «Արդէն տեւական ժամանակ է, որ Հայաստանը խօսում է Հայաստանի համար եւ Հարաւային Կովկասում տարածաշրջանի համար խաղաղ զարգացման դարաշրջան բացելու մասին: Մենք նաեւ Ալիեւից ենք պարբերաբար լսում խաղաղութեան մասին ուղերձներ, ընդհուպ՝ խաղաղութեան համաձայնագրի մասին, սակայն այստեղ կարեւոր է շեշտել, որ գործողութիւններն ու խօսքերը պէտք է համապատասխանեն: Մեր եւ միջազգային հանրութեան պատկերացումն այն է, որ ԵԱՀԿ Մինսքի խմբի եռանախագահութիւնն է այն ձեւաչափը, որտեղ նման խաղաղութեան համաձայնագիրը կարող է քննարկուել»:

## Հայ-Ամերիկեան Թանգարանի Հիմնաքար

Շարունակուած է 1-էն

Միջալէ Նպս. Մուրատեան եւ Վերպ. Հենրիկ Շահնազարեան: Բոլորն ալ իրենց ուրախութիւնը յայտնեցին որ մեծ թափով գործի լծուած են թանգարանի շինութեան պատասխանատուները եւ բարի երթ մղութեցին այս պամա-մշակութային մեծ ծրագրի որագործումին:

Իր ելոյթին մէջ Հայաստանի՝ աւագ հիւպատոս եւ դեսպան Դոկտ. Արմէն Բայբուրդեան ջերմօրէն ողջունեց Հայ-Ամերիկեան Թանգարանի եւ մշակութային կեդրոնի իրականացման աշխատանքները: Արդարեւ նախաձեռնութիւն մըն է որ մեծապէս պիտի սատարէր գալիք նորահաս սերունդներուն, որպէսզի անոնք մօտէն հետեւին մեզի փոխանցուած պատմա-մշակութային հարուստ ժառանգութեան:

Այս առթիւ ելոյթներ ունեցան նաեւ Կլէմէնտին քաղաքապետուհի Տիկ. Փոլա Տիվայն եւ Գալիֆորնիոյ խորհրդարանի անդամ էտլին Նազարեան եւ իրենց գորակցութիւնն ու խրախուսանքը յայտնեցին այս մեծ նախաձեռնութեան իրականացման: Նշենք որ Փետրուարի 16ին շինութեան վայր

այցելած էր նաեւ ԱՄՆ-ի գոնկրէսի անդամ էտրմ Շիֆ եւ տեղույն վրայ շրջապատյա մը կատարելով մօտէն ծանօթացած էր շինարարական աշխատանքերու գործընթացին:

Հոգաբարձական Մարմնի գործադիր նախագահ՝ Պերճ Կարապետեան, շնորհակալութիւն յայտնեց խօսք առնողներուն, նուիրատուներուն, կազմակերպութիւններուն եւ բոլոր այն հաստատութիւններուն, որոնք իրենց լիաբուն նուիրատուութիւններով սատար կը հանդիսանան այս մեծ ծրագրի իրագործումին, որուն բացումը կը նախատեսուի 2024 թուականին:

Այնուհետեւ թանգարանի շինութեան սիւներէն մէկուն քով պեթոնապատ փոսին մէջ տեղի ունեցաւ խորհրդանշական հիմնաքարի եւ 2014ին կայացած առաջին ժողովի ատենագրութիւնը (թանգարանի կառուցման շուրջ) պարունակող տուփիկի գետեղումը:

Սոյն պատմական իրադրութիւնն իր աւարտին հասաւ ներկայ հոգեւորականներու «Տէրունական» աղօթքով:

Բարի երթ շինարարական այժմու աշխատանքներուն:



# Washington Post. «Արդեօք էրտողանը իր ներկայացուցիչը Պիտի Ունենա՞յ Ամերիկեան Ծերակոյտին Մէջ»



«Արդեօք Թուրքիոյ նախագահը իր ներկայացուցիչը պիտի ունենա՞յ ամերիկեան Ծերակոյտին մէջ» Միացեալ Նահանգներու ամենաազդեցիկ պարբերականներէն մէկը՝ «Washington Post»-ը երէկուայ իր համարին մէջ այս հարցը կը հնչեցնէ՝ լուսաբանելով փենսիլվանիոյ մէջ ընթացող ներկուսակցական ընտրաշաւը: Թերթին պնդմամբ՝ հանրապետական ընտրողներու շրջանակին մէջ ծաւայած այդ քարոզարշաւի ընտրաշաւին միանձնեայ առաջատարը ԱՄՆ-ի թրքական համայնքի ամենայայտնի ներկայացուցիչներէն մէկն է՝ նախագահ էրտողանի հետ իր ջերմ յարաբերութիւններով յայտնի բժիշկ Մեհմետ Օզը:

«Մայիսին փենսիլվանիոյ մէջ կայանալիք ներկուսակցական ընտրութիւններուն՝ փրայմըրիներուն ընդառաջ Օզը միլիոնաւոր տոլարներ պիտի ծախսէ հեռուստատեսային գովազդի վրայ, անոր ճանաչելութեան աստիճանը պիտի հասնի 100 տոկոսի, անոր ալ գումարած ան միլիոնաւոր հետեւորդներ ունի ընկերային ցանցերու մէջ», կը գրէ «Washington Post»-ը՝ յատուկ ընդգծելով, որ վերջին հարցախոյզի հարցումները ես կը վկայեն՝ փենսիլվանիոյ մէջ բնակող հանրապետական ընտրողներուն գրեթէ 30 տոկոսը կը պատրաստուի քուէարկելու Մեհմետ Օզի օգտին:

«Դոկտոր Օզ» մականուամբ յայտնի թուրք սրտի վիրաբույժին այսպիսի ժողովրդականութեան գաղտնիքը, ըստ թերթին, միանգամայն հասկնալի է: 2000-ականներու սկիզբէն Օզը առողջապահութեան նուիրուած հեռուստատեսային շարք մը հաղորդումներ կը վարէ, որոնցմէ ամենայայտնին կը հեռարձակուէր ամերիկեան հեռուստատեսութեան առասպելը համարուող Օփրա Ուինֆրիի հաղորդման շրջանակներուն մէջ: Ճիշդ է, ըստ ամերիկեան ազբիւրներու, Մեհմետ Օզը այդ հաղորդումներու ընթացքին երբեմն բաւական վիճալարոյց մասնագիտական տեսակետեր կ'արտայայտէր, բայցեւայնպէս այժմ անոր ուղղուող գլխաւոր հարցերը քաղաքականութեան ոլորտէն են:

«Ո՞ր երկիրն է առաջնային դոկտոր Օզի համար», հարց կը հնչեցնէ «Washington Post»-ը՝ նշելով, որ այսօր ամերիկեան քաղաքական որոշ շրջանակներու մէջ սկսած են հարցականի տակ դնել Ծերակոյտի հարաւոր անդամին հաւատարմութիւնը Միացեալ Նահանգներուն:

«Ծերակոյտի անդամները յաճախ շահերու բախման կիզակէտին կը յայտնուին՝ թէ՛ անձնական եւ թէ՛ գործնական: Բայց դեռ երբեք չէր ստեղծուած իրավիճակ մը, երբ երկքաղաքացիին կրնայ ծերակուտական ընտրուիլ, այն ալ այնպիսի երկքաղաքացիին, որ ծառայած է օտար երկրի բանակին մէջ եւ խոր կապեր ունի երկրի մը հետ, որուն ղեկավարը ընդդէմախօսները հալածելու տխուր համբաւ ձեռք բերած է», կը գրէ «Washington Post»-ը:

Թերթին գնահատմամբ. «Այն հանգամանքը, որ «Դոկտոր Օզ» մականունով յայտնի Մեհմետ Օզը բազմաթիւ թեւերով կապուած է Թուրքիոյ եւ այն միջավայրին, որուն ներկայացուցիչն է միահեծան նախագահ Ռեճեպ Թայիպ էրտողանը, լուրջ մտահոգութիւններու տեղի կու տայ Ուաշինկթընի մէջ եւ անոր սահմաններէն դուրս»:

«Washington Post»-ը գրուցած է Թուրքիոյ խնդիրներով զբաղող ամերիկացի վերլուծաբաններու հետ. «Փորձագէտները կ'ըսեն, որ թէեւ Օզի թրքական ծագումը կրնայ նպաստել Ծերակոյտի բազմազանութեան, օրինաչափ է նաեւ այն մտահոգութիւնը, թէ ինչ ազդեցութիւն պիտի ունենայ էրտողանը անոր վրայ՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ Մեհմետ Օզի ընտանիքի անդամներն ու ունեցուածքը Թուրքիոյ մէջ են», կը գրէ թերթը՝ մէջբերելով վերլուծաբան Մայքըլ Ռուպինի հետեւեալ խօսքերը. «Օզի երկքաղաքացի ըլլալու փաստն ու թրքական քաղաքացիութենէ հրաժարելու հարցով անոր ցուցաբերած դժկամութիւնը անքուն գիշերներ պիտի պարզեն շեշտաբանութիւններու Դաշնային Բիւրոյի եւ միւս յատուկ ծառայութիւններու աշխատակիցներուն»:

ԱՄՆ-ի մէջ բնակող քարոզիչ Ֆեթուլլահ Կիւլենի հետ առնչութիւններ ունենալու պատճառով թրքական քաղաքացիութենէն զրկուած յայտնի պասքէթպոլիստ Էնես Քանթըրը Օզին վերաբերող գնահատականներուն մէջ աւելի կտրուկ է:

«Մարդիկ պէտք է հասկնան, որ «Դոկտոր Օզը» էրտողանի գրպանին մէջն է: Ան պիտի

# Վահագն Խաչատրեան Հայաստանի Նախագահութեան Միակ Ընդունելի Թեկնածու

## ՓԱՆՈՍ ԹԻԹԻՉԵԱՆ

Ուրախութեամբ կ'իմանանք մամուլէն թէ Բարձր Թէխնոլոգիաների եւ Արդիւնաբերութեան Նախարար Վահագն Խաչատրեան իր թեկնածութիւնը դրած է Հ.Հ. Նախագահութեան պաշտօնին: Կան նաեւ այլ մէկ երկու թեկնածուներ որոնք Խաչատրեանին լուրջ մրցակիցներ չեն կրնար նկատուիլ:

Հրաժարեալ նախագահը որ պաշտօնի կոչուեցաւ նախկին վարչակարգի օրով, քիչ առաջ Փաշինեանի Թաւշեայ Յեղափոխութենէն, զո՞ս պիտի երթար իր անձնական խառնուածքին: Ան անտեսելով երկրին սահմանադրական օրէնքները, դարաբաղեան կոիւնքերու մեր պարտութենէն ետք, սխալ քայլեր առաւ այնպիսի օրհասական ժամանակ մը, երբ հայրենի մեր ժողովուրդը կարիք ունի բարոյական բարձրացնելու ու միասնականութիւն ստեղծելով դիմակալելու անորոշ ապագան: Նախագահ Սարգսեան դժբախտաբար միանալով երկրին իշխանութիւնը տապալելու կոչուած խումբին, երկրին սահմանադրական օրէնքը խախտելով ապօրինի յայտարարութիւններ կատարեց: Հարցին մէջ աւելի չխորանալու համար աւելցնենք, որ հրաժարեալ նախագահը միջազգային համբաւի տիրացած անձնաւորութիւն մըն էր շնորհիւ իր գիտական համբաւին, բազմալեզու կարողութեան եւ դիւանագիտական փորձառութեան: Ան տուաւ մեր հայրենիքին իր կարելին:

Արմէն Սարգսեան զո՞ս գնաց իր խառնուածքին:

Ո՞վ է նախագահութեան թեկնածու Վահագն Խաչատրեանը: Անաչար եւ առարկայական մօտեցումով կրնանք ըսել թէ ան օժտուած է շարք մը առաւելութիւններով որոնք զինք ընդունելի կը դարձնեն նախագահական պաշտօնին: Թուենք այդ յատկանիշներէն գլխաւորները: Ան ունի պարկեշտ, անկաշառ, ու լայնախոս մարդու նկարագիր: Առաւել, քաղաքական եւ տնտեսական մարզերու մէջ վերլուծելու բարձր կարողութիւն: Ատեն մը նաեւ վարած ըլլալով Նախագահ Լեւոն Տէր



Վստահ ենք, որ 175-ամեայ Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան հովանիին տակ գործող՝ 37-ամեայ Լոս Անճելոսի Հայ Քոյրերու Վարժարանը, քոյր Լուիզա Գասարճեանի մեծաւորութեամբ, տնօրէն Դոկտ. Խուլիօ Թէյզիլին եւ փոխտնօրէնուհի տիկին Ռիթա Պոյաճեանին ղեկավարութեամբ, ինչպէս նաեւ վարժարանիս ուսուցչական կազմին եւ գանազան խորհուրդներուն եւ յանձնախումբներուն համագործակցութեամբ, նոր թափով պիտի շարունակէ իր երթը դէպի ապագայ եւ յաջողութեամբ պսակաւոր ուսումնական նոր տարեշրջաններ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



# Աւարայրի ճակատամարտի Արտացոլումը Հայ Մշակոյթի Սեշ (Փետրուար 24-ի Վարդանանց Տօնի առթիւ)

## ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

301 թուականին հայերի կողմից որդեգրուած Քրիստոնէական կրօնը ճիշդ ու ճիշդ մէկուկէս դար յետոյ դաւանափոխութեան վտանգի առջեւ էր կանգնած: Պարսկաստանի Սասանեան արքայ Հազկերտ Երկրորդը հայ ժողովրդի ինքնավարութիւնը վերացնելու եւ ազգին կրկին Զրադաշտական (Զրադաշտ Մարգարէի կրօն, որը պատկիրուած էր պաշտել կրակը) կրօնին վերադարձնելու ձգտումով, 451 թուականի Մայիսի 26-ին իր 100 հազարանոց բանակով եւ մեծաթիւ հսկայ փղերով Աւարայրի դաշտում ճակատամարտ է մղում Վարդան Մամիկոնեանի 60 հազարանոց զօրքի դէմ:

Պատմութիւնից յայտնի է, որ, թէեւ Վարդան Մամիկոնեանն ու իր զօրագունը զոհուած է ռազմի դաշտում, բայց յանուն կրօնի, յանուն հայրենայց գաղափարի համար եղած նման կարգի պարտութիւնը ընդունուած է համարել յաղթանակ: Պատճառը հետեւեալն է:

Պատերազմի դաշտում պարսիկները քսան հազարից աւելի զօհ էին տուել: Արքայ Հազկերտ Երկրորդը շատ լաւ հասկանում է, որ հայերի անկողորուն կամքի առջեւ հետագայում էլ խնդիրներ կ'ունենան, եթէ չհրաժարուեն հայերին դաւանափոխ անելու մտադրութիւնից: Աւելին՝ Աւարայրի ճակատամարտի ականատես պատմիչ Եղիշէն վկայում է թէ ինչպէս Հազկերտ Երկրորդը յայտարարում է.

- Հայերի ապստամբութիւնը ներուած է եւ կրկին իրաւունք է շնորհուած եկեղեցիներ շինելու:

Վարդան Մամիկոնեանն ու իր գինակիցները մէկ անգամ եւս հաստատեցին «Մահն իմացեալ անմահութիւն է» կարգախոսի ճշմարտացի լինելը:

Աւարայրի ճակատամարտը մեր ազգային-ազատագրական պայքարի բարձրակէտն է: Մեր նպատակը չէ պատմել Աւարայրի ճակատամարտի, կամ, ինչպէս ընդունուած է ասել՝ Վարդանանց պատերազմի մասին: Այդ թեմային առնչուող մեծահարուստ գրականութիւն կայ, եւ ցանկացած ընթերցող կարող է ձեռք բերել դրանք:

Հարիւրաւոր տարիներին ընթացքում Վարդան Ջօրավարի կերպարի բացառապատման, Աւարայրի ճակատամարտի դրուագները կերպարաւորուել են մեր գրականութեան, մշակոյթի, երաժշտութեան, կերպարուեստի մէջ:

Այժմ եկէք թերթատենք մեր մշակոյթի էջերը եւ դրանց մէջ յայտնաբերենք հիմնականում Վարդան Ջօրավարի կերպարին վերաբերող գրական, երաժշտական գործեր:

Ինքնին հասկանալի է, որ մամուլի էջերը թոյլ չեն տալիս հանգամանակից վերլուծութեան ենթարկել դրանք, ուստի յաւակնութիւն էլ չունենք ասելու թէ այս յօդուածը մասնագիտօրէն ամբողջական է:

Գարեբից եկող բազմաթիւ երգեր եւ բանաստեղծութիւններ կան Վարդան Մամիկոնեանի վերաբերող: Երգերի զգալի մասը նուազուած չեն եւ մեզ են փոխանցուել շրթէ-շուրթ, բերնէ-բերան:

Միջին դարերից սկսեալ բազմաթիւ երաժիշտներ փորձել են նոտագրել Վարդանին վերաբերող որոշ երգեր: Այս ուղղութեամբ զգալի աշխատանք են կատարել վենետիկի Միխիթարեան Միաբանութեան Հայրերը եւ հրատարակել են մի քանի երգեր, որոնցից յայտնի են «Տաճար փակեալ», «Ի պարս ընտրելոց» եւ չափազանց յայտնի Ներսէս Շնորհալիի «Նորահրաշ Պսակաւոր» շարականը, որը նուիրուած է Վարդան Ջօրավարին: Ահա մէկ քառեակ այդ շարականից.

ՎԱՐԴԱՆ, ԲԱԶՆԱՅԱՏԱԿ,  
ՈՐ ՎԱՆԵՑԵՐ զԹՇՆԱՄԻՍ,  
ՎԱՐԴԱԳՈՅՆ ԱՐԵԱՆԴՔՈ,  
ՊԱՍԿԵՑԻՐ զԵԿԵՂԵՑԻ:

Հրաշալի կոմպոզիտոր Էդգար Յովհաննիսեանը այս շարականը օգտագործել է իր «ԱՆՏՈՒՆԻ» բալետում:

Իրականում Վարդան Մամիկոնեանի կերպարը աւելի շատ մարմնաւորուել է գրականութեան մէջ, քան՝ երաժշտութեան: Ըստ որում, հիմնականում սփիւռքահայ արուեստագէտների եւ բանաստեղծների կողմից:

Մեզ յայտնի երաժշտական ծաւալուն գործը սփիւռքահայ կոմպոզիտոր Համբարձում Պէրպէրեանի «Խորհուրդ Վարդանանց» կանտատն է՝ գրուած Վահան Թէքէյեանի նոյնանուն ծաւալուն բանաստեղծութեան վրայ: Կանտատը գրուած է երգչախմբի եւ նուագախմբի համար: Ելնելով բանաստեղծութեան, հիմնականում նկարագրողական բովանդակութիւնից, կոմպոզիտորի մօտ երաժշտութիւնը սկզբում մեղմ է, հանդարտ, նկարագրողական («Գիշեր մը, երբ երբեք այսպէս լուռ ու լուրջ չէ դիզուած հսկայ բանակի մը շուրջ»): Թուում է համակ լուռութեանը վերջ չկայ, սակայն խաբուսիկ անդորրը խաթարուած է Վարդանի սարսուղ բողոքով:

ՎԱՍՆ ՅԻՍՈՒՄԻ, ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ,  
ՅԱՆՈՒՂՆԵՐՆԵՐ ԵՆՆԵՐ:

Հանդարտ երաժշտութիւնը հանկարծ իր մէջ է ներառում փողային հնչեղ գործիքներով ներծծուած նուագախմբային քայլերգը, որին քիչ անց միանում է երչախումբը՝ հաստատելու համար բանաստեղծի եւ երգահանի հաւատամքը.

ԴԱՐԵՐ Կ'ԱՆՑՆԻՆ, ԲԱՅՑ ՎԱՐԴԱՆԸ ԲԱԶ,  
ԲԱՅՑ ՎԱՐԴԱՆԸ ՍՈՒՐԸ, Կ'ԵՐԹԱՅ ՍԻՇՏ ԱՌԱԶ...

Գրեթէ նոյն հաւատն է գերիշխողը Գարեգին Սրուանձտեանցի «Թէ հայրենեաց» բանաստեղծութեան մէջ: Ըստ հեղինակի «Գողտնի քնարք» պիտի գովերգեն «Վարդանոյ ինկած երկիր, ուր սակայն, «Պիտի ծաղկի սուրբ հաւատը»:

Բանաստեղծ-բանահաւաք Գարեգին Սրուանձտեանցի անմնացորդ նուիրումը հայ մշակոյթին, ըստ իս, ամբողջական չի ներկայացուած հայրենեանը, մեր ժողովրդին: Երիտասարդ սերունդը բնաւ գաղափար չունի այդ խոշոր լուսաւորչի մասին: Հայ Մշակոյթի բանահաւաքների բոլոր մէջ, հիմնականում նա եղաւ ռահվիրայ: Նրանից յետոյ էր, որ մշակոյթի բազմաթիւ գործիչներ սկսեցին պեղել Արեւմտեան Հայաստանի հայրենակն խնդիրը բնակավայրերի ժողովրդական բանն ու խօսքը, հեք-

իաթներն ու ասերգերը: Վարդան Մամիկոնեանին նուիրուած բանաստեղծութիւնների մէջ ամէնատարածուածը Գարեգին Սրուանձտեանցի կողմից մշակուած «Իմ հայրենեաց Հոգի Վարդան» երգն է, որի բառերը պատկանում են Ս. Ֆէլէկեանին: Սփիւռքի ողջ տարածքին յայտնի է այդ երգը: ՀԱՅՐ ՄԵՐ աղօթքի նման, այն սովորում են մանկապարտէզային տարիքից սկսեալ: Ահա մէկ քառեակ այդ երգից.

ԻՍ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀՈԳԻ ՎԱՐԴԱՆ,  
ՀՈԳԻՍ ՀՈԳԻՅՈՒ ԵՂՆԻ ՂՈՒՐՊԱՆ,

ՈՐ ՏՂԱՌԻՏԻ ԱՓԵՐԻ ԲՈՎՎՎ  
ՎԱԹՍԻՆ ՀԱԶԱՐ ԿՏՐԻՉՆԵՐՈՎ  
ԶԱՐԿԻՐ, ԶԱՐԿՈՒՄ, ԻՆԿԱՐ  
ԲԱԶ-ԲԱԶ  
ՊԱՐՍԻԿ ՍՓՈՒԾ Ի ԶԱՆԴ ՈՒ  
ՅԱԶ:

Խորհրդային իշխանութեան օրոք արգելուած այդ եւ բազմաթիւ այլ՝ երգեր, ես սովորել եմ դեռ մանուկ հասակից՝ հայրիկիս մաքուր, անբիծ կատարման շնորհիւ: Այդ ամէնը նա իւրացրել էր վենետիկի Միխիթարեան Հայրերից, Ս. Ղազար կղզում ուսանած տարիներին: Նրանից լսած մեծաթիւ երգեր, տարիների ընթացքում իմ մշակմամբ կենդանութիւն են առել մենակատարի, երգչախմբի եւ սիմֆոնիկ նուագախմբի մեկնաբանման տեսքով: Դրանք բազմիցս կատարուել են ինչպէս Սփիւռքում, այնպէս էլ Հայաստանում:

Գարեգին Սրուանձտեանցի ԻՄ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀՈԳԻ ՎԱՐԴԱՆ երգին է անդրադարձել Մեծն Կոմիտասը, մշակելով այն կանանց երգչախմբի համար: Երգի պարզից էլ պարզ (ոչ պարզունակ) կառուցուածքի, մեղեդու շարժուն, քայլերգային բնոյթի շնորհիւ այն անմիջապէս մնում է ունկնդրի յիշողութեան մէջ:

Ինչպէս վերը նշեցի, Վարդան Մամիկոնեանի եւ Աւարայրի ճակատամարտի մասին հիմնականում արձագանգել են Հայաստանից դուրս գտնուող մշակոյթի գործիչները, իսկ հայաստանաբնակ գրող-երաժիշտների մէջ երկու անուն ունենք միայն մեր ձեռքի տակ:

Առաջինը աշտարակեցի Սմբատ Շահագիրզն է, որը 1901 թուականին, Մոսկուայի Լազարեան ճեմարանում իրականացուող Վարդանանց պատերազմի 1450-ամեակի առթիւ գրել է կէս գրաբար, կէս աշխարհաբար մի բանաստեղծութիւն, որի քառեակներից մէկը ուշագրաւ է մարտակոչի հրաւէր յիշեցնող հետեւեալ տողերով,

ՎԱՐԴԱՆ, ՄԵՐ ԲԱԶ ԶՕՐԱՎԱՐ  
ԹՈՒՐԸ ԶԵՆՔԻՆ ՈՍԿԵՎԱՌ,  
ՎԱՆՉՈՒՄ ԵՒՐ ԲԱԶԵՐԻՆ  
ԶԱՐԴԵԼ զԳԼՈՒԻՍ ՅԱԶԿԵՐՏԻՆ:

Երկրորդը Հայ Գուսանական արուեստի հիմնադիր Զիւանին է: Նա առաջին գուսանն է, որ գրել է գրական լեզուով, այն համեմելով Շիրակի դաշտին բնորոշ դարձուած քներով: Մեծ հայրենասէր գուսանը հիանալի մեղեդային հարուստ շաղախով մեղեդի է յորինել իր «Աւարայրի դաշտը» բանաստեղծութեան համար.

ԱՒԱՐԱՅՐԻ ԴԱՇՏԸ ՆԵՐԿԵՑ  
ԱՐԻՒՆԴ,  
ԱՆՄԱՀ ՎԱՐԴԱՆ, ՀՅՕՐ ՎԱՐԴԱՆ,  
ԲԱԶ ՎԱՐԴԱՆ  
ԱԶԳ ԵՎ ԳԸ ՅԻՇՈՒԻ ԱՆՄԱՀ  
ԱՆՈՒՆԴ  
ՎԱՐՍԻՐ ՎԱՐԴԱՆ, ՀՅՕՐ ՎԱՐԴԱՆ,  
ԲԱԶ ՎԱՐԴԱՆ,  
ԽՈՐՏԱԿԵՑԻՐ ԾԱՆՐ ԼՈՒԾԸ  
ՊԱՐՍԱԿԱՄԱՆ:

Միայն հրճուանքով կարելի է ընդունել այն փաստը, որ տաղանդաւոր երգիչ եւ Զիւանագէտ թովմաս Պօղոսեանի ղեկավարած գուսանական երգի համոյթը ահա քանի տարի է իր երգացանկի մէջ է պահուած Զիւանու մարտակոչ յիշեցնող «Աւարայրի դաշտը» երգը:

Վարդան Մամիկոնեանի անձնագործութեան եւ Աւարայրի ճակատամարտի պատկերների նկարագրման լաւագոյն օրինակ կարող է ծառայել կոմպոզիտոր Մակար Եկմալեանի մշակած «Պլպուլն Աւարայրի» խմբերգը՝ գրուած Միխիթարեան Հայրերից, հանճարեղ բանաստեղծ Ղեւոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» ծաւալուն, եռմասանի վիպերգի երրորդ մասի խօսքերի վրայ:

Բանաստեղծը Պլպուլին է վկայակոչում որպէս Աւարայրի անհղ, աշխարհացուց ճակատամարտի ականատեսի, որպէսզի նա աշխարհին պատմի կարմիր Վարդանի եւ նրա գինակից ընկերների մասին, թէ ինչպէս ընկան նրանք յանուն կրօնի, յանուն Աստուծոյ եւ յանուն Հայրենեաց ու հաստատեցին, որ ՄԱՀՆ ԻՄԱՅՆԱԿ՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է

Եկմալեանի Երաժշտութեան մեղմիկ, քնքոյշ, պատմողական բնոյթը աւելի քան համահունչ է Ալիշանի գրաբար-արեւմտահայերէնի զգլխիչ բնոյթին:

Հիմնականում ակորդներով (սա՛նկմալեանի գրելաճան է, ձայների ուղղահայաց ընթացքով, նոյնը նաեւ նրա Պատարագում, - ՀԵՆ. Ա.), եւրոպական մտածողութեամբ մշակուած խմբերգի բովանդակութիւնը աւելի ըմբռնելի է դառնում բաս-օստինատոյի (համառ, մնայուն բաս) շնորհիւ, որն անդադար կրկնուելով, հաստատում է ստեղծագործութեան միտք բանից:

Այժմ երկու քառեակ Ղեւոնդ Ալիշանի քնարական վիպերգից, այնքա՛ն մեղմիկ ու նրբին, որն ինքնին արդէն մեղեդի լինի կարծես.

Օ~Յ, ԴՈՒ ԲԱՐԵԿԱՍ ԱՅՐԱԾ  
ՍՐՏԵՐՈՒ,  
ԽՕՍՆԱԿ ԳԻՇԵՐՈՅ, ՀՈԳԵԱԿ  
ՎԱՐԴԵՐՈՒ  
ԵՐԳԵ ՊԼՊՈՒԼԻԿԴ. ԵՐԳԵ Ի  
ՍԱՐԴ,

ԶԱՆՄԱՀ ԲԱԶԲԵՆ ՀԱՅՈՑ, ԵՐԳԵ  
ՀՈԳԻՅՈՒ ՀԵՏ:

ՎԱՆՉԵ ՊԼՊՈՒԼԻԿ, ՎԱՆՉԵ ՀՈԳԵ  
ԳԵԶԱՅՆ,  
ՈՐ ԵՐԿՆՈՅ Ի ՎԱՅՐ ՀԱՅԻ ԵՒ  
ՎԱՐԴԱՆ,  
ՅԻՇԵ ԳՅԱՅԱՍԱՆ ՏՈՒՆ ԻՐ ՍԻՐԵ  
ԿԱՄԱՆ,  
ՀԱՅԱՍԱՆ ՅԻՇԵ ԶԻՐ ԿԱՐՍԻՐ  
ՎԱՐԴԱՆ:

Ալիշանից յետոյ այս «ԿԱՐՄ-ՐԻԿ» բառ - որակումը դարձել է խորհրդանիշ Վարդան Ջօրավարին բնութագրելու համար, եւ նրան յաջորդող բանաստեղծները նրա անուանը փակցրել են «ԿԱՐՄԻՐ» որակումը: Եթէ նկատեցիք, Զիւանու մօտ էլ կայ այդ մակդիրը:

Կարմիր Վարդանի անեղբ հայրենասիրութիւնը իր վառ արտայայտութիւնն է գտել

Մակար Եկմալեանի յաջորդ ստեղծագործութեան մէջ: «Լուց...», - նման կարճառօտ անուանում ունի երգահանի ամենայայտնի եռասպտում գործը, որը, ահա հարիւր եւ աւելի տարի կատարուած է արուեստագէտների կողմից: Ռաֆայէլ Պատկանեանի չքնաղ բանաստեղծութիւնը այդքան հարադատօրէն երաժշտականացնելու հանճարը միայն Եկմալ-



# Մեզի Յագկերտ Սը Պետք է

## ԱՐՄԵՆ ՔԻՒՐՔԵՆԱՆ


Վարդանանց պատերազմը, միօրեայ ճակատամարտ մը, մեր պատմութեան մէջ իր յատկանշական ու անջնջելի տեղը ունի: Պատերազմ մը, որ մղուած է երկու անհաւասար ուժերու միջեւ. մին՝ իր ինքնութիւնը պահելու եւ պաշտպանելու գիտակցութեամբ 60.000-նոց ազատամարտիկներու բանակ մը, որ մահուան հետ դէմ յանդիման գալիս եւ նահատակուելիք բնաւ վախ չունի, իսկ միւսը հայոց ինքնութիւնը, խղճի ազատութիւնը ոտնահարելու համար քուրմերու քմահաճոյքին ալ ենթարկուած Յագկերտի Հայոց Աշխարհ զրկած, փրկելու ջոկատով մըն ալ ուժեղացուած 300.000-նոց բանակն է:

Պարսիկներուն համար իրենց կրօնքը՝ գրադաշտութիւնը տարածելը, ուրիշներուն պարտադրելը կրօնական օրէնքի ուժ ունի: Յագկերտ Բ. (438-457) հայոց զրկած հրովարտակին մէջ կը գրէ, թէ հայեր կրօնական ճիշդ ուղիէն մոտորած են եւ այս մոտորածութեան համար աստուածներու առջեւ պատասխանատուն ինք՝ թագաւորն է, հետեւաբար անհրաժեշտ է, որ հայեր ուղիղ հաւատքին դառնան, ընդունին գրադաշտութիւնը եւ հետեւին պարսիկներուն: Վարդանանց պատերազմը՝ Աւարայրի ճակատամարտը, ճնշման եւ բռնութեան դէմ մարտնչելու անհրաժեշտութիւն մըն էր: Օրուան ղեկավարութիւնը գիտակից էր պարսիկ պետութեան հզօրութեան ու անոր աստուածներու գիտակցութեան ուժին: Յագկերտի հրահանգը՝ կրօնափոխութիւնը, քրիստոնեայի մը համար Քրիստոսի առջեւ մեղանչել էր, իսկ ազգային ըմբռնումով՝ դաւաճանութիւն, հայրենադաւաճութիւն: Պատերազմը հայ ժողովուրդին գոյատեւման համար անխուսափելի անհրաժեշտութիւն մըն էր:

Հայաստան 387 թուականին Բիւզանդիոնի ու Պարսկաստանի միջեւ երկուքի բաժնուելի վերջ, Արեւելեան Հայաստանի մէջ Արշակունիները թագաւորեցին մինչեւ 428: Այդ թուականէն սկսեալ Հայաստան դարձաւ ներքին ինքնավարութեամբ պարսկական նահանգ մը: Հայ իշխաններ կը շարունակէին վարել կարեւոր պաշտօններ: Հագարապետութիւնը՝ երկրին տուրքերը հաւաքելու պարտականութիւնը, Ամատունի տոհմին ձեռքն էր, սպարապետութիւնը՝ Մամիկոնեաններու, դատավարութիւնը՝ կաթողիկոսութեան: Իւրաքանչիւր նախարար եւ իշխան իր հետեւազօրքը ու այրուածին (հեծելազօրքը) ունէր եւ ստիպուած էր իր զօրքով պարսկական պատերազմներուն մասնակցել: Երկիրը կը կառավարուէր մայրաքաղաքէն՝ Տիգրանի, նշանակուած հայ կամ պարսիկ մարզպաններու՝ կառավարիչներու միջոցաւ:

Գահ բարձրանալի վերջ, Յագկերտի նպատակն էր ձուլել՝ պարսկացունէլ հայերը, վրացիներն ու աղուանները: Պարսիկներուն համար խորթ էր, որ իւրաքանչիւր հպատակ ազգ ապրէր, զարգանար, բարգաւաճէր իր իւրաքանչիւր սովորութիւններով, հաւատքով, մշակոյթով:

Պարսկաստան հայոց Արշակունեաց թագաւորութեան անկումէն ի վեր արդէն հայերը պարսկացունէլ քաղաքականութիւնը կը գործադրէր: Երեք մարզպանութիւն-



ները, որոնք, որպէս քրիստոնեայ, թէ՛ իրարու հետ եկեղեցական սերտ կապեր ունէին եւ թէ՛ Պարսկաստանի ոխերիմ թշնամի էին, Փոքր Ասիոյ մէջ պարսիկներու մրցակից Բիւզանդիոնի կրօնակից էին: Արեւմտեան Հայաստան արդէն բիւզանդական նահանգ մը դարձած էր եւ դռնկից Արեւելեան Հայաստանի մը կրօնական գետնի վրայ Բիւզանդիոնի հետ կապ ունենալը պարսիկներուն համար բաղձալի իրավիճակ մը չէր: Ըստ պարսկական արքունիքի հասկացութեան, եթէ իրենք յաջողէին Հայաստանի ներքին ինքնավարութեան վերջ տալ, նոյնը իրագործելը Վրաստանի ու Աղուանից աշխարհին համար դժուար պիտի չըլլար, որով նոյն քաղաքանութեան ենթարկուած էին թէ՛ Վրաստան եւ թէ՛ Աղուանից աշխարհը:

Կրօնափոխութիւնը, ձուլումը իրագործելու համար զանազան միջոցներ կային: Հայաստանի գիւնտորական ընդդիմութեան ուժը ջլատելու համար անհրաժեշտ էր նախարարներու միասնականութիւնը պառակտել, նաեւ հայկական բանակը երկրէն հեռացնել: Երկիրը տնտեսապէս քայքայելու նպատակով հարկաւոր էր տուրքերու քանակին բարձրացումը, որու հետեւանքով ստեղծուած դաժան կացութենէն փրկուելու համար ուսմիկ ժողովուրդը ինքնին կրօնափոխութեան պիտի դիմէր: Պարսկական տեսակէտը նախարարներուն եւ իշխաններուն պարտադրելու համար ալ անոնց որոշ առանձնաշնորհումները հարկ էր սահմանափակել: Եկեղեցին ու կղերականութիւնը, որոնք տուրքէ գերծ կացուցուած էին եւ ազատագրական հարցերու մէջ մեծ ազդեցութիւն ունէին, պէտք է տուրքի ենթարկուէին: Դատական իշխանութեան պատասխանատուները, փոխանակ կաթողիկոսներու, մոզերը պէտք է ըլլային:

Յագկերտ արքունի ծրագրին իրագործման համար 442-ին հայկական հեծելազօրքը, Վարդան Մամիկոնեանի հրամանատարութեամբ, երկրէն դուրս կը հանէ՝ Պարսկաստանի թշնամի քուշաններու (հոններու) հետ պատերազմելու պատճառաբանութեամբ: 447-ին ալ արտակարգ լիազօրութիւններով Հայաստան կը զրկէ իր հաւատարիմ

պաշտօնեաներէն Դենշապուհը: Այդ օրերուն Հայաստանի մարզպանը Սիւնիք նահանգի տէր Վասակ իշխանն էր: Դենշապուհ, հարկատուներու ճշգրիտ թիւը ստուգելու նպատակով, մարդահամար կը կազմակերպէ: Տուրքերը կը կրկնապատկէ, նոյնիսկ կ'եռապատկէ: Առեւտրականներէն կը զանձէ ծանր բաժ (հարկ): Եկեղեցին ու եկեղեցականութիւնը կ'ենթարկէ տուրքի: Պարսիկ հարկահաւաքներ տուրքերը կը զանձեն ամենալայրագ բռնութիւններով եւ աւազակային յափշտակութեամբ:

Հայ պաշտօնեաներու փոխան կը նշանակէ պարսիկները: Քուրմութեամբ, չարափօսութիւններով նախարարները իրարու դէմ կը հանէ: Իր որդեգրած քաղաքականութեան հետեւանքով ոչ մէկ նախարար ինքզինք ապահով կը զգայ: Պարսից արքունիքին առջեւ ամբաստանուելու եւ իրենց կալուածներուն բռնազրաւումին եւ ուրիշներու տրուելուն վախը գիւրեմք կը սարսափեցնէ:

Նախարարական շրջանակին մէջ Դենշապուհի քաղաքականութիւնը իր արդիւնքը ցոյց կու տայ: Ոմանք կը դառնան պարսկական քաղաքականութեան հլու յենակներ, պատրաստ՝ գործադրելու պարսկական բոլոր հրահանգները: Ուրիշներ, ներկայ կացութենէն՝ քաղաքական եւ հողային իրաւունքներէ զրկուելու սպառնալիք-

մարզպանը պատրաստ է պարսիկներուն համակերպելու, իսկ սպարապետ Վարդան, որ հոններու դէմ մղած պատերազմէն 449-ին երկիր կը վերադառնայ, փրկութիւնը գինեալ ապստամբութեան մէջ կը տեսնէ:

Վարդանի որդեգրած դիրքը կարելի չէ ապստամբութեամբ պիտակել:

Հարց մը լուծելու համար պատերազմը ամենավերջին միջոցն է: Նախ պէտք է փորձուին դիւանագիտական բոլոր ճամբաները: Թէեւ դիւանագիտութիւնը ինքնին պայքար մըն է, անարիւն պայքար մը, ժողովուրդը անհարկի արիւնահեղութենէ փրկելու համար տարուած պայքար մը, սակայն առանց գիտութեան յենակէտի ալ մեծ արժէք չի ներկայացներ: Բայց եւ այնպէս բանակցութիւնները, անելի մը հասնելի առաջ, գինեալ դիմադրութեան պատրաստուելու առիթը կ'ընծայեն: Երբ դիւանագիտական միջոցներով կարելի չէ երկրին խաղաղութիւնը պահպանել, կը դիմուի գինեալ պայքարի: Վարդանանքն ալ նոյն գնացքով կ'ընթանայ:

Յովսէփ Ա. Հողոցմեցի կաթողիկոսի (437-452) նախագահութեամբ, Յագկերտի հրովարտակին պատասխանելու համար, նախկին մայրաքաղաք Արտաշատի մէջ 17 եկեղեցականներու եւ 18 նախարարներու մասնակցութեամբ կը գումարուի ազգային ժողով: Պատրաստուած պատասխանը շատ յստակ



«Վարդանանց Պատերազմ», Ճառընտիր եւ ԺՁ. դար, Վանայ լճի շրջան, Ծաղկող՝ աճյայտ

ներէն եւ կրօնափոխութեան գաղափարէն դժգոհ, հայրենասիրական դրօշի տակ կը հաւաքուին ու կը պատրաստուին ըմբոստութեան:

Վասակ, Դենշապուհի՝ գինք հայոց թագաւոր ճանչնալու խոստումէն գինովցած, անոր պառակտիչ քաղաքականութեան կը հետեւի: Կամազուրկ եւ բարոյապէս անկայուն մարդիկը իր շուրջ կը հաւաքէ:

Այսպէսով Հայաստանի մէջ օրուան կացութեան հանդէպ մօտեցումի իրարամերժ երկու տեսութիւն կը յառաջանայ: Դենշապուհ հասած է իր նպատակին: Վասակ

է: Հայեր, Յագկերտի հաւատարիմ հպատակները, պատրաստ են պետութեան ծառայելու, նոյնիսկ իրենց արիւնը տալու, բայց իրենց հոգիներու ապահովութեան կամ կորուստի հարցը պետութեան իրաւասութենէն դուրս կը մնայ:

Հայոց նախարարները ու սպարապետը Տիգրանի մէջ, ուր Յագկերտի հրամանով հաւաքուած եւ գրադաշտութիւնը ընդունելու կամ աքսորուելու երկընտրանքին առջեւ դրուած էին, ժամանակ շահելու, հայ ժողովուրդը անդեկավար չթո-

Շար.ը էջ 15

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**  
 From Armeno-Turkish to Armenian and English languages.  
 Bring your family's history back to life!  
 Family letters, postcards, diaries, and more...  
 Please reach out for quotes  
 Website: [norayr.daduryan.com](http://norayr.daduryan.com)  
 Email: [norayrdaduryan@gmail.com](mailto:norayrdaduryan@gmail.com)



# Ծարաւ



## ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Ի՞նչ բանի ծարաւը կը տառապեցնէ ձեզ: Հո՞ղ էք ծարաւ անձրեւի, սիրտ՝ սիրո՞յ, շրթունք՝ համբույրի, կամ հոգի՝ խունկի: Քնարական պատկերներ են այս խօսքերը անկասկած: Սակայն, ջրառատ մեր աշխարհի ամէն աշուղ, ամէն քերթող, ամէն գրիչ պապական՝ անյագ խմեր է մայրենիի աղբիւրէն ու գոհացում է գտեր անոր ջուրէն: Այսօր, յարգելի ընթերցող, մենք ալ մօտենանք հայոց լեզուի աղբիւրին ու գովացնենք մեր սրտերը: Այսօր կը խօսինք «ծարաւ» բառի մասին՝ վայելելով հայկական գրականութեան մշտնջեն աղբիւրը:

Հայ ընթերցողը «ծարաւ» բառին ծանօթացաւ Ե. դարուն: Այս երկվանկը առաջին անգամ գրի առնուեցաւ Աստուածաշունչի մէջ: Յիսուսը օր մը աղաղակեց ու ըսաւ, թէ ով որ ծարաւ է թող գայ իրեն. «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս»: Ան նաեւ ըսաւ, թէ ով որ խմէ իր ջուրէն մինչեւ յաւիտեան ծարաւ պիտի չմնայ. «Ըմպէ ի ջրոյն գոր ես տաց նմա, մի? ծարաւեսցէ յաւիտեան»: Կ'ուզէ՞ք յիշել, թէ ի՞նչ էր իսախալ Յիսուսի վերջին խօսքերէն մէկը. «Ծարաւ եմ»... Աստուաշածունչ մատենաի մէջ «ծարաւ» բառը յիշուեցաւ 47 անգամ: Անոր էջերու մէջ կան ծարաւի բազմաթիւ պատկերներ, ինչպէս՝ «անապատ ծարաւի», «երկիր ծարաւուտ», «գայլ ծարաւի»: Բառս ծնունդ տուաւ նաեւ պատկերալից արձականերու: Սակաւաթիւ են անոնք, լոկ քանի մը կաթիլ՝ մեր լեզուի ովկիանոսի մէջ, ուստի բոլորը կը փափաքիմ յիշել. «ծարաւաբեր», «ծարաւակէզ», «ծարաւահիւծ», «ծարաւամահ», «ծարաւատենչ» եւ «ծարաւատոչոր»:

Ծարաւը որեւէ բանի բուռն ցանկութիւնն է, տենչ, փափաք, կարօտ: Իմաստի այս բազմազանութիւնն է, որ ծնունդ տուաւ անոր փոխաբերական ծաւալուն հասկացողութիւններուն ու մեր բանաստեղծներն ու երգահանները դարեր շարունակ ըմպեցին գանոնք: Այսօր հայը «ծարաւ կը մնայ», «ծարաւը կը բռնէ», «ծարաւ» կը տառապի», իսկ ճարպիկները «ծարաւ ջուրը կը տանին...կը բերեն»: Կայ մէկ այլ դարձուածք՝ «արեան ծարաւ»: Անոր մասին ազգիս հետ միասին անասելի շարժարանքներու ենթարկուած բանաստեղծ տղաքը պիտի խօսին: Համբերեցէ՛ք մինչեւ 20-րդ դարու առաջին տասնամեակը: Վերադառնանք հին օրերուն:

Միջնադարուն հայ մտաւորականի «ծարաւ» վիճակը այլ եւ այլ տեսակներ ստացաւ: Նարեկացին աղաչեց Աստուծոյ, որ վերինը ըլլար գթած. «Մի՛ մատուցաներ

բաժակ դառնութեան ի ժամ ծարաւու»: Լեարդը այրած աշուղ Քուչակը նայեցաւ իր եարին ու պաղատեցաւ. «Ջուր տուր իմ ծարաւ լերդիս, քո սիրողը ի տապն եմ ընկել»: Միջնադարեան ժողովրդական երգերու մէջ պապական շրթունքներ ըսին. «Մի կաթիլ ջուր տուր, ծարաւս կտորէ», «Սիրող ծարաւն է պատել իմ սիրտը», «Սրտի ծարաւը չի կտորի ջուրը»: 1700-ի կէսին մէկ այլ այրած սիրտ՝ Սայաթ Նովան երգեց. «Քու համբուրիդ կարօտ, ծարաւ մեռայ յիս... Ծարաւ մարթըն քու ջրեմէն չի կշտանայ»: Արդե՞օք սիրավառ այդ աշուղները լուր չունէին, թէ Արցախի մէջ, Շուշիի շրջանէն ներս, Փրջամալ գետի մօտ կայ բուժիչ յատկութիւններով օժտուած աղբիւր, որ կը կոչուի «Ծարաւաջուր»: Գէթ խմէին պուտ մը անկէ...:

Մեր լեզուաբան եւ բանահաւաք այրերու վկայութեամբ «ծարաւ» բառը հայրենի ամէն գաւառի մէջ ունեցաւ իր ինքնուրոյն հնչիւնը, ու մենք հասկցանք, թէ գէթունցիի ծարաւը տարբեր էր սեբաստացիէն, ակնցիի ծարաւը՝ մշեցիէն: Աւաղ, բոլորը հեռացան կեանքի ծարաւ, բայց մնաց անոնց խօսքը. Սեբաստիա, Համշէն՝ «ծարաւ», Ալաշկերտ, Մուշ՝ «ծառաւ», Ակն, Խարբերդ, Պոլիս՝ «ձառաւ», Ջէյթուն՝ «ձէօրէօլ», իսկ Հաճըն՝ «ձէյէվ»: Այս յիշատակութիւնը կաթիլ մը ջուր թող ըլլայ անոնց ծարաւ հոգիներուն համար:

Այն օրերուն, երբ հրէշաւոր բոց մը անխնայ կը յօշոտէր հայու-թիւնը, գորշ վոհմակներ վայրենի՝ խնջոյք կ'ընէին հայրենի քաղաքներու մէջ եւ հրապարակներու վրայ, ու մարդակերպ այլանդակ ուրուականներ անմեղի արիւն կը խմէին կուժ կուժ, Սիամանթօն գարհուրանքով դիտեց անոնց քստմնելի երեսները ու գայրոյթով պոռթկաց... «Արեան ծարաւ ամբոխ»: Այդ խառնաշփոթութեան մէջ Չպուքբարեաններու Դանիէլը բանտի մէջ գտաւ իր հօր, դիտեց անոր աչքերը, ապա որբացած գաւակի մը հեկեկանքով գրեց. «Որքան նիհար էիր եւ որքան աչքերդ / Ծարաւ էին արեւու»: Խաղաղութեան օրերուն սակայն հայ քնարը վարժ էր այլ եղանակներ նուազելու: Ահա քանի մը հեշտալուր հնչիւն. «Ես քու ազատածարաւ գերին եմ... Ես ծարաւ եմ, ինչպէս եւ դուն՝ յաղթութեան... Արշալոյսին հուրերուն տակ Հողը մերկ է եւ ծարաւ», Սիամանթօ, «Բանուորուհին. Կը սիրեմ՝ քու անթթութիւնը ու ծարաւդ», Դանիէլ Վարժապետ, «Շրթունքս են ծարաւ միակ համբույրին... Շրթունքներս վերջին պուտին են ծարաւ... Խուն-

կի ծարաւ իմ հոգիս կը ծծէ պահն այս հանդարտ», Միսաք Մեծարենց, «Կայ իմ հոգու մէջ մի անյագ ծարաւ. / ... Յաւիտեան օտար, հայրենական տուն», Վահան Տէրեան, «Ահա իմ հոգին ... մի ծարաւ բողբոջ... Սիրող սրտի ծարաւ, ծարաւ մնացի... Ես սիրու ծով ... ծարաւ եմ», Աւետիք Իսահակեան, «Յաւէտ ծարաւ եմ երկինքին անդրատենչ, աննիւթաբաղձ հոգին երկինքին ծարաւ է», «Ծարաւն ունի հոգիս / Աղբիւրներու գէջ, կարկաչոն... Ծարաւ, ծարաւն ունի հոգիս / Արշալոյսի գաղջ ծովերուն», Ռուբէն Սեւակ: Ապա եկաւ Համօ Սահեանը: Ան նախ գրուցեց Սիւնիքի՝ իր ծննդավայրի հետ, ապա համամարդկային սիրով իմաստասիրեց. «Մննդավայր. Եկել եմ ես, / Որ ջուր տանեմ քո ձորերից / Դաշտի ծարաւ ծաղիկներին... Թող աշխարհը ձաւ չունենար. Սիրտն առնէի ծարաւ մարդկանց / Ու գնայի կարկաչելով, / Աչքս փակուէր ժամանակին, /

Յամաքելս չտեսնէի»: Հիւթալի է մեր լեզուն: Ով որ խմէ անոր աղբիւրէն ծարաւ չի մնար, ըլլայ անձրեւի ծարաւ հող, սիրտ՝ սիրոյ, կամ թէ շրթունք՝ համբույրի... Իսկ ո՞վ է որ յաճախ յայտնուեցաւ «ծարաւ» բառի առջեւ ու երկրպագեց անոր. հայ գուսանը: Այսօր, յարգելի ընթերցող, որպէս կաթիլ մը ջուր մեր սրտերուն, որոշեցի «ծարաւ» երեք երգահանի՝ Գուսան Շահէնի, Գուսան Աշոտի եւ Գուսան Շերամի հեշտալուր մեղեդիներով հրաժեշտ տալ ձեզի.

\*\*\*  
Ես ծարաւ եմ, պապակ սրտիս  
Դու մի գուլալ գով աղբիւր ես:  
\*\*\*  
Սիրուց ծարաւ  
Ես ճամփեքը ո՞նց անցնեմ:  
\*\*\*  
Աղբիւր եմ սարի սրտին,  
Չարա չկայ սրտիս դարդին,  
Ամէն անցողը կը խմէ.  
Բլբուլն է ծարաւ ալ վարդին:

## Աւարայրի ճակատամարտի Արտագուլունը

Շարունակուած էջ 12-էն

եանի նման երգահանը կարող էր ունենալ: «Լուս...» երգ-խմբերգը եռամասնի կառուցուածք ունի:

Առաջին մասում ինքն է՝ պոետը իր խոհերի հետ: Ազգին վիճակուած ծանր կացութիւնը, տարիների զրկանքներն ու անլուր տառապանքները հուսահատութեան գիրկն են նետել նրան: Երկրորդ մասում հերոսի հուսահատ վիճակը դառնում է վարակիչ, եւ համընդհանուր թախիծն ու տխրութիւնը փարատուած է կարծես հերոսի խաբուսիկ լաւատեսութեան ազդեցութեան տակ: Թուում է թէ կէսօրուայ արեւն է օգնութեան հասնելու հային, կարծեօք՝ լոյսի շող է երեւում հորիզոնում: Չէ, ո՛չ, խաբուսիկ է այդ ամէնը: Ի՞նչ է բերելու գիշերը: Այստեղ արդէն Լուսինն է, վերջին հոյսը, որին էլ ստիպուած է դիմել հերոսը.

Ա՛ն, ՅՈՒՆՅ, ՓՈՅԼԵ ՏԵՐԱՊԵՍ  
ԼՈՒՍԻՆ  
ԳՈՒՅԵ ՔՈ ՓՈՅԼԻՑ ՓՈՅԼ ՏՍՍ  
ԵՒ ՅԱՅԻՆ:

Լսե՛ց, լսեց տխրադէմ Լուսինը եւ նա պատրաստ է աշխարհին փոխանցել հայրի կոչ-պատգամը, ուրեմն՝ շարունակիր բարեկան:

ՊՍՍՄԵ ՇԱՏԵՐՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ  
ՍԱՅՐ,  
ԿԱՍ ԻՆՉՊԵՍ ԿՈՐԱՒ ՅԱՅ ԱԶԳԻ

ԳԱՅՐ,  
ԿԱՍ ԻՆՉ ՎԵՅ ՍԻՐՈՎ ՍԻՐՈՒՄ  
ԵՐ ՎԱՐԴԱՆ,  
ՄԱՅՐԵՆԻ ՅՈՂՈ՛Ւ ԱՇԽԱՐՅ ՅԱՅ  
ՅԱՍՍԱՆ:

- Ահա Վարդան Զօրավարի եւ Աւարայրի ճակատամարտի ոչ ամբողջական գրական-երաժշտական գործերի մօտաւոր ցանկը, որ ներկայացրինք ընթերցող լայն հասարակութեանը:

Վերջում, արժէ յիշել նաեւ, որ Վարդան Մամիկոնեանի կերպարը ուշադրութեան է արժանացել նաեւ կերպարուեստի գործիչների մօտ: Յիշենք քանդակագործ Երուանդ Քոչարի կերտած Վարդան Մամիկոնեանի արձանը Երեւանի ամենամեծ թանգարանի մէջ:

Գեղարուեստական հիանալի երեսակայութեամբ Վարդան Մամիկոնեանի պատկերն են նկարել մեծանուն նկարիչներ Գրիգոր Խանճեանն ու Էդուարդ Իսաբէկեանը: Գրիգոր Խանճեանի «Վարդանանց պատերազմը» հանճարեղ պաննոն (Պաննոն,- մեծակտաւ իւղաներկ,- ՉԵՆ. Ա.), որի վրայ հեղինակն աշխատել է աւելի քան քսան տարի, ճակատամարտի առանձին դրուագներ, գունաւոր պատճենահանմամբ մտել են 20-րդ դարի հայրենական եւ արտասահմանեան ճանաչուած գեղարուեստական հրատարակութիւնների մէջ:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email:-----



ՄԱՅԱԶՊ



ԱՐԱՄ ԱՎԱԿՅԱՆԻ ԹԻՒՆԵԱՆ
Մնեալ Հայկալ 1925

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ ԱՐԱՄ ԱՎԱԿՅԱՆԻ-Ի որ պատահեցաւ Յունուար 20, 2022ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Փետրուար 28, 2022ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան Church of the Hills մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրները՝ Դուստրերը՝ Արշօ Յարութիւնեան Վարդուկ Յարութիւնեան Տէր եւ Տիկ. Սուհէլ եւ Բէթօ Տանհաշ Անի Յարութիւնեան Նաճարեան Թոռները՝ Տէր եւ Տիկ. Նշան եւ Մարիա Փափագեան եւ զաւակունք Գարլա Տանհաշ եւ զաւակունք Տէր եւ Տիկ. Անուար եւ Թինա Թարապիշի եւ զաւակունք Քոյրը՝ Ժօզէֆին Գուզուեան Այն Մալաք եւ զաւակները՝ Ճորճ, Փիլի, Ժան եւ Գարօլին (Պէյրուսթ) Եղբօր տիկինը՝ Մարիթան Գուզուեան եւ զաւակունք Եղբօր տիկինը՝ Մարի Գուզուեան եւ զաւակունք (Հայկալ)

Եւ համայն Յարութիւնեան, Գուզուեան, Այն Մալաք, Տանհաշ, Նաճարեան, Փափագեան, Թարապիշի, Մարլեան, Խոտանեան, Պօղոսեան, Մակարեան, Էքմէքճեան, Գուրումլեան, Պէյրէճիլեան եւ Զանեցեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան Ժողկէպակի, Աուրատուութիւնները կը խնդրուի կատարել Կիլիկեան Բարեփոխական Հաստատութեան (Guiligian Benevolent Foundation, c/o 1854 Glenwood Road, Glendale, CA 91201)

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Տիկ. Ալիս Գուզուեան-Յարութիւնեանի մահուան տխուր առիթով՝ կիլիկեան Բարեփոխական Միութեան վարչական կազմը իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն հարազատներուն եւ դուստրերուն յատկապէս՝ իրենց վարչական ընկերուհի՝ Վարդուհի Յարութիւնեանի: Յիշատակն անթառամ, լոյսերու մէջ ննջէ հոգին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՍԱՐԳԻ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն, ընտանեկան պարագաներուն եւ համայն մերձակորներուն ու բարեկամներուն:

Մեզի Յազկերտ Սը Պէտք Է

Շարունակուած էջ 13-էն

ղելու եւ պատրաստուելու նպատակով քրիստոնէութիւնը կ'ընդունան: Վարդան հայրենիք վերադառնալէ վերջ, որպէս քրիստոնեայ, փոխանակ իր անձնական ապահովութեան համար Բիւզանդական Հայաստան անցնելու կամ զրադաշտական կրօնքը ընդունելով պարսիկներու ծառայելու, հայ ժողովուրդի մահու եւ կենաց այդ ճակատագրական պահերուն կը նախընտրէ գինուիլ ու հայութեան գոյութիւնը պաշտպանել: Վարդանի դիրքաւորումը՝ դանակը ոսկորին հասած խաղաղ ու օրինապահ ժողովուրդին ստիպողաբար գէնքի դիմումն է: Պարս-

կական բռնութիւններէն պաշտպանուելու, ազատելու միակ ելքն է: Դիրքաւորում մը, որ Պարսկաստանի գոյութեան չէր սպառնար: Վարդան շատ լաւ գիտէր, որ իշխող պետութեան՝ Պարսկաստանի համար հպատակ ժողովուրդը՝ հայերը, կրօնափոխութեան ենթարկել կը նշանակէր զանոնք ստրկացնել, հարստահարել, ազգային նկարագրէ զրկել եւ ձուլել: Նոյնպէս գիտէր, որ հպատակ ժողովուրդին՝ հայոց համար քրիստոնէութիւնը ինքնաճանաչման, ինքնապաշտպանութեան ու գոյատեւման ամենաազդու միջոցն էր: Քրիստոնէութիւնը հայոց համար դարձած էր օրէնք, արդարութիւն, ապրելակերպ, բնաւորու-

թիւն, ազգային քաղաքականութիւն, մշակույթ: Կրօնական ու ազգային անքակտելիօրէն իրարու զօդուած էին: Կարելի չէր կրօնքը պետութենէն, դպրոցէն, մշակույթէն, քաղաքական կեանքէն անջատել: Կորսնցնել կրօնքը, կը նշանակէր կորսնցնել ազգութիւնը: Ժողովուրդներ, մեծ կամ փոքր, եթէ պայքարին իրենց գոյատեւման համար, կարող են ապրիլ ու պատմութեան բեմէն չանհետանալ: Առանց պայքարի կարելի չէ չարիքի ճամբան փակել եւ խաղաղութեան ու ազատութեան ճամբան հարթել: Աւարայրը հայերու համար ռազմական պարտութիւն է, սակայն՝ բարոյական յաղթանակ: Ազատագրութեան համար թշնամիին դէմ կ'ելլեն ժողովուրդային բոլոր խաւերը՝ գիւղացի, քաղաքացի, իշխան, կղերական: Հոս է որ հայր թշնամիի գերագանց ուժերուն դէմ մարտնչելու հմտութիւնը ձեռք կը ձգէ եւ զայն ապագայի հայրուկային կոթիւններու ընթացքին լաւագոյնս կ'օգտագործէ: Վարդանանց պատերազմը հայ ազատագրական պայքարի պատմութեան փայլուն էջերէն մին է: Այս ճակատամարտով հայուն ինքնագիտակցութիւնը աւելի բարձր մակարդակի մը կը հասնի: Յոյց տրուած հայրենասիրութիւնը, անձնագործութիւնը յաջողող սերունդներուն համար կ'ըլլայ ներշնչումի աղբիւր: Վարդանանց սխրագործութիւնը կը դառնայ ճգնաժամային պահերուն ժողովուրդը ոտքի պահող ոգի մը, ներքին ուժ մը: \* \* \*

Այսօր մենք՝ սփիւռքահայութիւնս, Աւարայրի դաշտէն հագարաւոր մղոններ հեռու, մեր մահաբեր թմրութենէն սթափելու համար դժբախտաբար Յազկերտի մը պէտք ունինք:

Գաղթականութեան լուծը մեր վրայէն նետած ենք: Մեր ghettoներէն՝ հաւաքաբար բնակութիւն հաստատած շրջանակներէն շատոնց դուրս ելած ենք: Ghetto-ն արտաքին վտանգներէ մեզ պաշտպանող մեր փշաւոր ոգնին էր: Մենք հոն մեր լեզուին կառչած, մեր սովորութիւններով, բարքերով, եկեղեցիով, հայութեամբ, մեր անցեալի յուշերով կ'ապրէինք: Սակայն պայմանները չէին թոյլատրեր, որ ghetto-ական կեանքը կարենայինք շարունակել: Նոր սերունդը պէտք է նոր երկիրը ճանչնար, լեզուին տիրապետէր, ապրուստի նոր միջոցներ գտնէր՝ նոյնիսկ իր ընտանեկան յարկէն հեռու:

Տեղական լեզուն նոր գրականութեան մը բանալին եղաւ: Նոր սերունդը մեզի անծանօթ խորթ մշակույթի մը հետ դէմ յանդիման եկաւ: Միջավայրին հետ քայլերը յարմարցնելու ճնշման տակ՝ մեր պայպենական արժէքները նահանջի ճամբան բռնեցին, նոյնպէս՝ հայերէնն ու հայկական անունները: Դժուարահանգիւն կարծուած մեր հայկական անունները փոխանակուեցան տեղական, մեզի խորթ, ուժացումի առաջնորդող ոչ-հայկական անուններով: Մինչդեռ մենք որքան գեղեցիկ, օտարին համար դիւրահանգիւն անուններ ունինք: Ստորակայութեան բարեօրոյթ

մղուած՝ մեր ինքնութիւնը քողարկելու նպատակով զանոնք անտեսեցինք: Այսօր, երբ մեր շուրջը լեցուած են այնպիսի ժողովուրդներ, որոնց անհատներուն անունները տեղացին, հոգ չէ թէ դժուարութեամբ, կը ջանայ արտասանել, մենք տակաւին մեզի համար այդ խորթ անունները կը գործածենք: Այդ նորեկները հպարտ են իրենց անուններով, հոգ չէ թէ այդ անունները ուրիշներու համար դժուարահանգիւն ըլլան:

Սկսածք տեղական սովորութիւններուն աւելի արժէք տալ: Տարուեցանք Christmas-ի տնտեսական փայլուն հմայքէն: Շատերու համար Ս. Մնունդի քրիստոնէական ոգին մնաց ստուերի մէջ: Մոռցանք թէ ի՞նչ էր Բարեկեղանը: Halloween-ը, տեղացիները կապկելով, մանուկներու համար եղաւ աւելի հրապուրիչ:

Thanksgiving-ը՝ տեղացիին գոհաբանութեան օրը, ընտանիքի բոլոր անդամներով միասնաբար հնդկահաւ ուտելու օրը, դարձաւ մեր տուններէն ներս սովորութիւն: Անտարակոյս, միջնորդարին ազդեցութեամբ տեղական սովորութիւնները մեր աւօրեայ կեանքին մէջ իրենց տեղը պիտի գրաւեն, բայց պէտք է թոյլատրենք, որ անոնք մեր պայպենական արժէքները, բարքերը տեղահան ընեն: Իւրաքանչիւր հայկական սովորութիւն, - հոգ չէ թէ ան ըլլայ հնաբոյր, - որ կը հեռանայ ու այլեւս մաս չի կազմեր մեր աւօրեային, բան մը կը պակսեցնէ մեր հայկականութենէն: Ի վերջոյ կ'ըլլանք արմատախիլ, հայութենէ դատարկուած ազնիւ քաղաքացիներ:

Միթէ գործադրուած քաղաքականութեան նպատակն ալ այդ չէ՞: Ոչ ոք չազկերտեան ոճով հրովարտակ մը կը դրկէ: Ոչ ոք արգելք կ'ըլլայ, երբ հայերէն խօսինք, անշուշտ՝ եթէ խօսինք: Ոչ ոք Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտամունքը խափանելու կ'աշխատի ու մեր ծիսակատարութիւններու կատարման անհանդուրժողութիւն ցոյց կու տայ: Ոչ ոք մեր եկեղեցիները կործանելու համար մոգեր կը դրկէ: Ոչ ոք կրօնափոխութիւն կամ դաւանափոխութիւն կը պարտադրէ: Բայց մեր շուրջը մեր հոգւոյն փրկութեան համար շատ մօտէն հետաքրքրուող, առաքելական եւ ուղղափառ եկեղեցիէն հեռացած աղանդաւորներ կը վխտան: Մեր եկեղեցիներուն մէջ արձանագրուած խառն ամուսնութիւնները անբաղձալի համեմատութիւններու հասած են:

Այս բոլորը անազաններ են, բայց լսողներ կա՞ն, ո՞ւր են: Մեր երեք հազար տարուան պատմութիւնը, լեզուն, մշակույթը, առաքելական եւ ուղղափառ կրօնքը մեր ձեռքէն բռնութեամբ խլելու տրամադիր Յազկերտի մը պէտք ունինք: Թմրութենէ սթափելու համար մեզի Յազկերտ մը պէտք է: Այսօր մեզ մեր թմրութենէն սթափեցնող եւ գիտակցութեան հրաւիրող Վարդաններու, Ղեւոնդ Երէցներու, Յովսէփ Կաթողիկոսներու պէտք ունինք: Ի՞նչ արժէք ունի անոնց նահատակութիւնը յիշատակել, եթէ անոնց որդեգրած ուղիէն կը շեղինք:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680



# Նորվեգիան Բուլղարի Գերագանցեց Փեքինի 24-րդ Չմեռային Ողիմպիական Խաղերուն

FULL MEDAL CHART				
COUNTRY	GOLD	SILVER	BRONZE	TOTAL
1  Norway	14	14	11	39
2  Germany	14	10	7	31
3  Canada	11	8	10	29
4  United States	9	8	6	23
5  Netherlands	8	6	6	20
6  South Korea	5	7	5	17
7  Olympic Athletes from Russia	2	6	9	17
8  Switzerland	5	6	4	15
9  France	5	4	6	15
10  Sweden	7	6	1	14

Նորվեգիան առաջին տեղը գրաւեց Փետրուարի 20-ին աւարտած Փեքինի 24-րդ ձմեռային Ողիմպիական Խաղերու ընդհանուր մետալային եւ ոչ պաշտօնական հաշուարկներուն հիման վրայ:

Նորվեգիայի հաւաքականը նուաճեց 37 մետալ, որոնցմէ 16-ը՝ ոսկի, 8-ը՝ արծաթ 13-ը՝ պրոնզ: Ռուսաստանի ողիմպիական կոմիտէի խումբը 32 մետալ ունի (6 ոսկի, 12 արծաթ եւ 14 պրոնզ), Գերմանիոյ հաւաքականը՝ 27 մետալ (12 ոսկի, 10 արծաթ եւ 5 պրոնզ):

Ընդհանուր առմամբ՝ Փեքինի 24-րդ ձմեռային Ողիմպիական Խաղերուն 7 մարզաձեւերուն մէջ 109 մետալ տրուած է: Մետալներու արժանացած են 27 երկրներու մարզիկներ:

## Ախոյեաններու Լիկա. «Լիվերփուլ» Յաղթեց «Ինթերին»

Ֆուտպոլի Ախոյեաններու Լիկայի մէջ կայացան 1/8 եզրափակչի մի քանի հանդիպումներ:

Իտալական «Ինթերը» սեփական յարկի տակ ընդունելով անգլիական «Լիվերփուլին» պարտուեցաւ 0:2 արդիւնքով: «Կարմիրներու» կազմին մէջ աչքի ինկան Ռուպերթօ Ֆիրմինոն եւ Մոհամետ Սալահը:

## «Ռեալի» Յաղթանակը՝ 3:0

Սպանիոյ առաջնութեան 25-րդ հանգրուանին առաջատար «Ռեալը» ընդունեց «Ալբասէն»-ը: Իտալացի Կառլօ Անչելոտիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

63-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ սպանացի յարձակող Մարկօ Ասենսիոն, 80-րդ վայրկեանին պրագիլացի յարձակող Վինիսիոս Ժուստոնը կրկնապատկեց իտալացի Կառլօ Անչելոտիի գլխավորած խումբի առաւելութիւնը, իսկ աւելացուած ժամանակին 11 մեթրանոցը արդիւնաւէտ կատարեց ֆրանսացի յարձակող Քարիմ Պենզեման:

25 խաղէն յետոյ «Ռեալը» 57 կէտով առաջատարն է եւ 7 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղը գտնուող «Սելտիայի» (24 խաղ) նկատմամբ:

## «Միլանը» Ոչ Ոքի Խաղաւ Յետնապահի Յետ

Իտալիայի առաջնութեան 26-րդ առաջատար «Միլանը» հիւրընկալեց յետնապահ «Սալերնիտանային»: Խաղը աւարտեցաւ հաւասար՝ 2:2:

«Միլանին» պարտութենէն փրկեց խորուաթ յարձակող Անտօ Ռեբիչի կողմէ 77-րդ վայրկեանին:

«Միլանը» 56 միաւորով առաջին տեղը կը գրաւէ եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող ախոյեան «Ինտերէն»-ը, որ 24 խաղ խաղցած է: «Ինթերը» Միլանի մէջ ընդունեց «Սասուոլոյին» եւ անսպասելի պարտութիւն կրեց 0:2 արդիւնքով:

## «Ռոման» Հրաշքով Փրկուեցաւ Պարտութենէն

Հոռոմի «Ռոման», որու կազմէն ներս կը խաղայ Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը, իտալիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին «Վերոնայի» հետ խաղին հրաշքով փրկուեցաւ պարտութենէն:

Առաջին կէսին հիւրերը երկու կոլ նշանակեցին եւ շօշափելի առաւելութիւն ստացան: Սակայն, ընդմիջումէն յետոյ դաշտի տէրերը մեծ ջանքերու օգնութեամբ կարողացան հաւասարեցնել հաշիւը՝ 2:2: Փրկարար կոլը 84-րդ վայրկեանին նշանակեց էտորարտօ Պովեն:

«Ռոման» այս հաւասարութենէն յետոյ վաստակեցաւ 41 միաւոր եւ մնաց 7-րդ տեղը:

## Նեյմարի Կոլը, ՊՍԺ-ի Պարտութիւնը

Ֆրանսայի առաջնութեան 25-րդ հանգրուանին առաջատար ՊՍԺ-ն մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Նանտի» հետ: Արժենթինացի Մաուրիսիօ Պոչետինոյի գլխավորած խումբը պարտութիւն կրեց 1:3 արդիւնքով:

## «Թոթնհեմ» Ուժեղ Էր «Մանչեսթըր Սիթիին»



Անգլիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին ախոյեան եւ առաջատար «Մանչեսթըր Սիթիին» ընդունեց Լոնտոնի «Թոթնհեմին» եւ պարտութիւն կրեց 2:3 արդիւնքով:

26 խաղէ ետք «Մանչեսթըր Սիթիին» 63 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը գտնուող «Լիվերփուլը» (25 խաղ) ետ է 6 կէտով:


«Չելսին» մրցակիցի դաշտին վրայ նուազագոյն հաշուով պարտութեան մատնեց «Քրիսթըլ Փելասին» եւ 50 կէտով երրորդն է:

## Սոհամեդ Սալահ. Երջանիկ Եմ, Որ 150-րդ Կոլս Նշանակեցի «Լիվերպուլի» Կազմին Մէջ

Անգլիոյ «Լիվերփուլի» եգիպտացի յարձակող Մոհամետ Սալահը բոլոր մրցաշարերուն 150-րդ կոլը նշանակեց: Փրեմիեր Լիգայի 26-րդ հանգրուանին «Լիվերփուլը» 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Նորուիչ Սիթիին»:

«Իհարկէ, ես երջանիկ եմ, որ նշանակած եմ 150 կոլ: Միշտ հպարտութիւն կը զգամ այս ակումբին մէջ կոլ նշանակելով, եւ ամենակարեւորը յաղթանակներն են, ինչին մենք հասանք նաեւ այս խաղին», - Սալահի խօսքը կը մէջբերէ ակումբի կայքը:

«Լիվերփուլը» այս մրցաշրջանին արդէն 100 կոլ նշանակած է: Եւրոպայի հինգ առաջատար լիգաներուն մէջ աւելի շատ կոլ նշանակած է միայն Գերմանիոյ ախոյեան Միլանին «Պայլընը»՝ 108 կոլ:



## Մեսի. Մենք Շատ Ոգեշնչուած Եմք Ախոյեաններու Լիգայի Գաւաթը Նուաճելու Գաղափարով

Ֆրանսական ՊՍԺ-ի արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին 1/8 եզրափակչի առաջին խաղին Մաուրիսիօ Պոչետինոյի նկատմամբ 1:0 արդիւնքով յաղթանակէն յետոյ գնահատած է փարիզեան խումբի առիթները Ախոյեաններու Լիգային մէջ:

«Կը կարծեմ՝ մենք ունինք այնպիսի կազմ, որ կարող է ձգտիլ Ախոյեաններու Լիգայի տիտղոսին: Մենք շատ ոգեշնչուած ենք գաղափարով եւ հեռանկարով: Յոյս ունինք, որ կեանքի կը կոչենք այդ գաղափարը:

«Ոչ ամէն անգամ կը յաղթէ ուժեղագոյն խումբը: Պէտք է կեդրոնանալ բոլոր մանրուքներու վրայ՝ մտածելով լաւագոյնը դառնալու նպատակի մասին: Ուժեղագոյն խումբերն են որ կը հասնին իրենց նպատակներուն», կարծիք յայտնած է Մեսին:

«Ռեալը» - ՊՍԺ պատասխան հանդիպումը տեղի կ'ունենայ Մարտի 9-ին:



Ընդմիջումէն յետոյ ՊՍԺ-ի պրագիլացի յարձակող Նեյմարը արժենթինացի յարձակող Լիոնել Մեսիի փոխանցումէն յետոյ գրաւեց մրցակիցի դարպասը, սակայն աւելին ընել փարիզեան խումբը չկարողացաւ: 59-րդ վայրկեանին Նեյմարը չկարողացաւ արդիւնաւէտ կատարել 11 մեթրանոցը:

ՊՍԺ-ն 59 միաւորով առաջինն է, «Նանտը» ունի 38 միաւոր եւ 5-րդն է: